Ա Ր Ա Ր Չ

ԹԻՖԼԻՍ. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ԴԱԿՏԼԱՑԵԼ. 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԲԱՂԴԱԻՐՐ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ.

(Ա. Տիմ. Զ. 6.).

Ծաղի խորքումը ծածկուած կայ մի գաղտնիքեայ, որ ոսկուգին ուժ ու Հոգորմին պ ժուռար է այդ խնդիրները գտնելն, երբոր խոտոռղմամ է ծոլի մուխ խոլքն։ Այդ գոյտահուքը չէ կարող պարծենալով ցոյց տալ իւր տեսակ տեսակ գեղեցիկ գոյներն, որով պարզարուած է, գրանից շահողներ մի բան չէ երևում. բայց, երբոր նորա երկու բաժանուած պատեհներ բացվում է, տեսնվում է, որ նորա մէջը շատ թանկագին մարգարիտներ կան։

Այդ վնասմունքը նմանութիւն ունի մարգարտ որոին, որ

ամեն մի յանցանքից իրան մաքուր է պահում, և, առանց տատանուելու, շեղուելու, կամ հեռանալու իւր Ստեղծողից, ապաւինում է նորա սիրոյն։ Ինչու որ աշխարհիս ծովի խորն էլ որ իջնի, և արհամարհուելը նորա ճակատագիրն էլ որ լինի, բայց մարգարիտներ պէտք է գտնենք նորա մէջն, որ պարգեւում է մեզ դերագոյն բազում առաքինութիւն։

Այս աշխարհս տեսակ տեսակ ուրախութիւնների ծաղկաղարդ տեսարանն է. գժոխքը նորանց սրտումն է՝ որոնք որ ուզում են գժոխք լինի իրանց մէջն։ Իրանց հաստած և ունեցած ցանկութիւններից չկշտանալով, նորա խանգարում են իրանց սրտի հանգստութիւնը, մարմնաւոր կեանքի վայելմունքի մէջ վչացնում են իրանց առողջութիւնն։ Իրանց անհամբերութիւնից, որով որ յոյս են դնում ապագայի բազդաւորութեան բարիքների վերայ, կորցնում են ներկայ րոպէի ուրախութիւնն և մարդ սա սրտին վախագելի անվրդով հանգստութեան վայելքը։

Մարդոց ունեցած սաստիկ բազձանքից, որ ա֊եղէ լ֊ին հասնեն, յառաջ են գալիս ամենաշատ կրքերն, որ մեզ տանջում են. այսպէս ժլատութիւնն ապագայից վախենալով, ունեցած բազդաւորութիւնից իրան զրկում է, շռայլութիւնն միշտ աւելի դրամից վայելքների եռանդից ընկնելով՝ երբէք յագուրդ չէ գտնում, պատուասիրութիւնն ու փառասիրութիւնն իւր արժանաւորութիւնն ընդունելուն ամենևին չէ կարեզանում բաւականանալ. նախանձը՝ թշնամական աչքով է նայում ամեն մի իւր նմանի մարդու վերայ, երբոր գերազանցութիւններ ունի. զրպարտութիւնն՝ նախանձի կամակատար քոյրն է, այսպէս էլ ամեն մոլութիւնների ամբողջ խումբն։ Պատճառ որ՝ ով որ չ֊ունէ սիրեց, սրտումն էլ որ չլինի, բայց և այնպէս ուրիշ ամեն մեղքերին էլ սերտ բարեկամութեան ձեռք է մեկնած ու սեղմած լինում։

Այ տեսիլն են յառաջ գալիս շատ ու շատ գանգատներն ու արտասուքներն։ Այս կրքերից են յառաջ գալիս աշխարհիս թշուառութիւնները, որ մարդիկ այս կեանքս տանջանքների ուռումնարան, խաղալութիւն ու հանգստութիւն չգտնելու

տեղ են համարում։ Այդեն բանից աւելի այս մեր պախարակելի զգացմունքներից է ժխոիք գոյանում մարդու սրտի մէջ։

Բոլորովին քաղցաւոր լինելու համար քիչ բան պէտք է մարդու։ Ցիսուս Քրիստոս մեր երջանկութիւնը կամենալով, յայտնի ու պարզ կերպով ցոյց տուեց մեզ երջանիկ լինելու ճանապարհն։ Ինչու համար պիտի չհամակուենք նորա խօսքերն։ Ինչու համար ենք դուրս գալիս, հեռանում նորա ձեռքի տակից։ Ինչու համար ենք մեր յանդուգն ցանկութիւններով ու հաճոյքով բնութեան մեզ համար դրած յաւիտենական կարգ ու կանոններին հակառակ գնում։

Այ որ անվիա ու անսահման անպարկեշտութիւններով իր աւազակութիւնը սաստիկ խանգարել է, ինչու համար է գանգատվում աշխարհից, փոխանակ գանգատելու իր յիմարութիւնից, որ իրան պատժում է։ Երբ որ մէկ մարդ՝ իր ամբարտաւան բնութիւնովն իր քաղաքակիցներին իրանից սառեցրել է ու հեռացրել, երբ որ մէկն իր անխոհեմութիւնովն ինքն իրան համար պ ժուռ և անել հանգամանքներ է ստեղծել, որոնց մէջը տապակվում է, ինչու համար է ճուռ աչքով նայում իր անսահմանելի վիճակի վերայ ու գանգատվում մարդոց անկարեկցութիւնից։ Ինչու համար, ինչպէս Ս. Գիրքն ասում է, չի յարմարվում ժամանակին։ Ինչու համար է պահանջում իր ամբարտաւանութեան մէջն, որ բոլոր աշխարհս՝ իր հաճոյքին համեմատ՝ փոխուի, փոխանակ ինքն աշխարհիս կարգին համեմատ վարուելու և ապրելու։

Եթէ աշխարհիս վերայ շատ չարիք կան, այդ է պատճառն որ այդ չարիքն յառաջ են եկել։ Ամենիմաստ Արարիչն է արդեօք սխալուիլ, թէ կարճատես մարդն։ Երբ որ՝ իր կամքն կատարել ուզող երեխան՝ լաց է լինում, որ չի կարող այն ունենալ, ինչ որ իր սիրան ուզում է, մի՞թէ աւելի խելացի և զգուշաւոր ծնողայ յանցանքն է, թէ՞ երեխայի յիմարութիւնն։ Ինչ որ Աստուած արել է, նորա արածը մեզ համար բարի է։ Աստուած իմաստութեամբ է պատճ՛-ա-ռ ծել, ինչ որ մեզ տալիս է, դու էլ սորվիր իմաստութեամբ ընդունելն։ Ինչ որ Աստուած մեզ չէ տալիս, սորվիր իմաստութեամբ առանց նորա էլ կառավարուելն։ Աստուած խոստանում է մեզ բարիք. սորվիր իմաստութեամբ նորա խոստացած բարեացն արժանի լինելու։

Աստուած մեր նպատակը բաց է անում, դնում մեր առաջը. որպիսի իմաստութեամբ դրծ դնել քո ոյժը, որ հասնէ։

Դու ասես ես քաշում, որ մինչև յայժմ ամենևին բոլոր աւար եղած չեմ։ Ես, քննիր քո կեանքիդ ընթացքը, քո գլխիդ եկածներն. ինչպէս այսպէս եղաւ, որ քո ունեցած կեանքի քո որեիդ ուղեցածի պէս չէ. բայց քննիր թէ՝ դու էլ որդեաք միշտ այնպէս էիր, ինչպէս որ պէտք է լինէիր։ Դու մոռացում ես, որ անսիրտ մորդ կեղ դէդ հետ խոստ կերպով վարուեցան. բայց երբ որ դու քո պարտականութիւնդ հաստատութեամբ էիր կատարում, չէիր ղգում արդեօք, որ դու այսպիսի անսիրտ վարմունքների միջոցին, քո գլխիդ եկածներից աւելի բարձր էիր։ Դու ասում էիր, որ այս՝ այն վայելչութիւնն, այս՝ այն ուրախութիւնն քեզ նման աղջիկ մորդ կ ունէին, իսկ դու՝ ոչ. բայց դու էլ ունէիր արդեօք այս ու այն նեղ ու ժուռ դրութիւնն ու կարօտութիւնն, որ նորա հաշում էին։ Ու կարողութիւնդ չաւելացաւ, չմեծացաւ այնքան կարճ ժամանակի մէջ, ինչպէս որ քեզ ցանկալի էր. մի քանի անյաջողութիւններ էլ ունեցար, որ որդիդ ծանր էին դալիս. բայց բանական բան ունէիր և շատ աւելի՝ քան թէ ուրիշ հազարաւոր մորդիկ, որոնց որ քո չորս կոպէկ տեսում ես աւելի կարօտ ու ողքաթ վիճակի մէջ։ Դու տխուր օրում տուտաւոք ես թափում քո հրեխայիդ ապագայի վերայ. բայց ունեցած բոլոր ուժովդ աշխատիլ ես, որ նորան պահպանես աղիւ ճանապարհի մէջ։ Կարելի է դու տխրում ես՝ քո սիրած տասնիկ կրծող մի ակարութեանդ վերայ. բայց ամեն քո մէջ չափաւոր լինելովդ քո տուողութեանդ համար հարիւրաւոր հոգու ունեցել ու տրիլ ես։ — Ահա տեսում ես ինչպէս էլ, որ մեր բարօրութեան մեծագոյն մասը մեր ձեռքումն է։

Աստուած կամենալ է, որ հարստ քաղաքացի լինի. այս աշխարհիս վերայ էլ անգամ նա բաղդաւորութիւնից դուրս չէնի իւր ունեցած ուժերը չափով. Այո՛, այդպէս է կամեցել նա, որովհետև մեր ամենատարբի Արարիչը միայն մեր բարին է կամենում։

Ամեն մի մահկանացու մարդ կարող է բաղդաւոր լինել բայց այն ժամանակ միայն — երբ որ ինքը ցանկայ։ Ազատ կամք է տուել մեզ Աստուած՝ երկնաւոր մեր Հայրը. ինչու որ մենք պէտք է

լինելիք ինքնագլուխ որոշումներ, ստեղծուած իւր պատկերային եւ այլ թէ անկամք պատկերներ, որ անընդունակ են բարեացն՝ կամ չարիւն. Աբեմն բազդաւոր լինելն՝ աստուածային շնորհօքն՝ ամենամի մարդու կամքիցն է կախուած: Այն բազդաւորութիւնն, որ մեր սեպհականութիւնք չեզք քնարմուծ՝ ձգմարիտ բազդաւորութիւն չէ ամենեւին, ինչու որ այն, ինչ որ ինձ գալիս է դրսից, նոյնպէս էլ հեշտ կերպով կարող է իմ ձեռքից դուրս թռչել:

Աբեմն ամենայն բազդաւորութեան հիմն միրն է. Միրն է այն անսխալ միջոցն, որ ամեն մի հանգամանքում մարդ իւր իշխանութեան տակ կարող է ունենալ ու իւր կեանքի վերայ տիրապետ լինել: Այն, ինչպէս շատ անգամ է ասուել մեզ այդ մասին, եւ ինչպէս դեռ անգամ ենք հաստատել մեզ աստուածի խոհականի միտքն: — Այս միջոցն է գո՞հ լինել և գո՞հ անել: Չեզք բեր եւ ունեցիր հոգւոյ հաստատ յօժարութիւն շնորհակալ սրտով ընդունել այն, ինչ որ Աստուած պարգեւում է. ունեցիր սրտի փափակ քաջութիւն առանց այն բանին կատարելութեան և տպրելու, ինչ որ քեզ աստուածային նախախնամութիւնը չէ պարգեւում:

Գո՞հ լինել Ահաբ-ազանից: — Այս խօսքերն, որ ասում եմ այդ է ցնծում սիրտ: Աստուած եմ, որ ոչ մի ժամանակ մի պղծագործութիւն ունեցած չեմ քո երկնաւոր Հօրից: Ապաքինութեան էր շատ անգամ քո սիրտ տեղը չլինելն այս կամ այն փորձանքի միջոց, որ ասանդ քո մի բան անելուց, քո գլխիդ եկել են: Աստուածանից չէինն գալի արդեօք բոլոր քո գլխիդ եկածները, նա քո կամքի գործերն չէինն արդեօք: Ինչպիսին էր քո պատիժ կատարելն երբ որ պատիժ սիրելիներդ քո ձեռքիդ առնում մեռանում երբեմն քեզ մօտիկ բարեկամներիդ գլխին մի անակնկալելի վարձանք եկաւ, ու նրանցից զրկուեցիր, կամ երբեք հարստութիւնդ կորչիր. նոյնպէս և երբեմն անընդունելիր, որ ուրիշների ձեռքը հարստութիւն ընկաւ, որոնց արժանի չէինն, որովհետև աստուած իրանց աշխատութեանն ձրի, գետնից գտած բանի պէս տուացան և ունեցան, մինչդեռ դու, քո ճշմարտիդ քրտինքը թափելով, միշտ աշխատել ես, աշխատում, միշտ սրտով ու խղճմտանքով գործ ես կատարել աստուծ խոստովանութեան, ու էլի հեռու չես գնացել: — Այդ

ժժգոհութիւնն, որ դու ղգում էիր,—ոմն էիր մեղաւոր համարում. ոմնիցն էիր գանգատ անում: Ո՛ր գանգատ աշխարհիս ընթացքի վերայ էր ու պատահմունքի անարդար վարմունքի վերայ, ինչպէս որ դու ասում էիր: Բայց որո՞յ ձեռքն է, որ աշխարհիս ընթացքն առաջնուանից ծրագրում է, կամ պատահմունքի ուղեկնալու իւր ընթացքն և ճանապարհը նախագծում: Աստուծոյ ձեռքը չէ՞ արդեօք այդ: Մրրիկ կայ մի աւելի բարձր եակ, քան թէ Ամենաբարձրեալն:

Գո՛հ եղիր Աստուածանից, այոյնքն է՝ գոհ եղիր այն վիճակումն, որ Ստեղծողդ պարգեւել է քեզ այս աշխարհումս: Թէ ինչո՞ւ համար է քեզ հէնց այս՝ և ոչ ուրիշ վիճակ պատրաստել, Իրան՝ ամենիմաստ և ամենաբարի եակին է միայն յայտնի: Բայց քեզ համար, քո հոգւոյդ համար, հոգւոյդ զօրութեան, գործելու և շինելու կերպին համար, նորա կոչմանն համար, անկասկած ամենալաւ վիճակն այն է եղել, որ քեզ կամեցել է որ ունենաս:

Գո՛հ եղիր Աստուածանից: Ո՛ր սրտիդ ժաւար գալն՝ ունեցած վիճակիցդ՝ աշխարհիս բաների ընթացքը չի փոխիլ, այլ միայն գերագոյն Իմաստութեանը դէմ՝ հայհոյութիւն է: Եթէ որ Աւրարիչն ուրիշ մարդոյ տուել է ուրիշ միջոցներ, որ իրան քաղաւոր անեն. եթէ որ նորանց տուել է առիթներ՝ անուն ստանալու, աւելի զօրաւոր կապակցութիւններ ունենալու—նորանց այդ ամեն բարւոյ հետ տուել է միանգամայն վրկարար հակակշիռն էլ: Դու ոխալուծես, երբոր ծիրանւոյ տակը՝ միշտ տևողական ուրախութիւն, հարստութեան ոսկեզօծ սրահներն մէջ՝ հոգւոյ մշտական ամենաքաղցրիկ հանգըստութիւն, կեանքի ամենաբարձր վարչութիւնես ստուգում, ու կարծես թէ՝ կայ ու կգտնես: Չկայ լոյս, որ իւր հետն տուեր չունենայ. այդ բանն, որ հասկանայիր, դու կցանկայիր քո միտքդ բոլորովին վոխել ու գլխիդ հանել, և մինչև անգամ սրհամարհել քո վատադդ այն մարդու նման լինելու, որին որ այժմ դու նախանձելի մարդ ես համարում: Դու շատ աւելի լաւ կհամարէիր այն մարդը մնալ, ինչ որ այժմ ես:

Գո՛հ եղիր Աստուածանից.—ու եթէ գոհ լինես, քո բաղդաւորութեանդ կէսն արդէն ունիս: Դու երախտագէտ և ուրախ սրտով գին կդնես այն բանին, և սիրով կվայելես, ինչ որ քեզ

բաժին է ընկել։ Դա, հաւատալով բոլոր աշխարհի աստուածային կառավարչի իմաստութեանն, ուրախ սրտով եանից չես ընկնիլ անպատճառ այն անելու, ինչ որ դեռ ևս չունիս, ու կսովրես առանց նորան ևս կառավարուելու և ապրելու։ Դու գիտիդ կհանես, դէն կքցես մի շարք յանդուգն ու մոլի յանկութիւններ, որ քեզ հանգստութիւնից զրկում են ու զուր տեղն ապագայի քայլդ շուռտացնում։ Այն մարդն է միայն ամենապատրաստ, որ իւր սրտի մէջն ունի ամենաշատ չիատատուած ցանկութիւններ. քիչով բաւականացողը՝ քիչ բանի է ցանկանում և հէնց դորանով էլ հարուստ է։ Ձկա՞ծ խակոպէս ոչնաչեայ ըհն այն է, որ Տէրբ Աստուածով երջանիկ է և այդ ուրեցած ըհոնքն է բաւականանում։

Գոհ եղէք ինչ-եղանից։ Բայց այս խօսքուս պիտի հասկանան՝ ոչ թէ մարդոց իրանք իրանցից գոհ լինելը, մարդոց, որոնք որ իրանց անմուածութիւնից՝ կամ՝ մեծամտութիւնից միայն՝ կարծում են թէ՝ ինչ որ արել են, ամեն բանն էլ շատ լաւ են արել, դորանից աւելի լաւ անելը կարելի չէր։ Ինչդ քեզնից գոհ եղիր ասելով, այն եմ հակացնում, որ քո սրտիդ մէջը պէտք է համաձայնութիւն լինի քո հետ, որ քո գործերդ ու խօսքերդ երբէք չհակասեն քո ներքին զգացմունքիդ իւր պարտականութեանցը կողմանէ։ Այնպէս գործիր, որ ինչդ քո առջևդ պատիւ ունենաս. որ քո գիտակցութիւնդ ամեն ժամանակ քեզ արդարացնի Աստուծոյ առաջ, քո իսկ առաջդ և թէ բոլոր մարդոց։ Մարդս այն ժամանակն է միայն ինքն իրանից գոհ, երբոր չէ զգում իւր սրտի մէջ ամենևին ինքն իրան յանդիմանելու մի գործ՝ կամ մի յանցանք. Դայն հաւո՞ք Աստուածն կպէանի։

Առաքինի մարդու յատկութիւնն, սեպհականութիւնն է՝ բազդաւորութեան մէջ բոլորովին հանգիստ ու խաղաղ մնալ, իսկ գժբազդութեանց մէջ երկաթի նման պինդ սիրտ։ Այն խաղաղիկ երջանկութիւնն, որ դու զգայիր, երբոր մի բարի գործ կատարեցիր, որոյ մասին, կարելի է, բացի քեզանից և միայն Աստուածանից՝ ոչ ոքին յայտնի չէր — միտք բեր՝ ինչպէս էր քո բոլոր սիրտդ ուրախութեամբ լցնում։ Հոգւոյդ այն մաքուր գժուարութիւնն, երկնից համար այդ նուիրական զգացմունքդ ուրիշ զուարճութիւնների ու վայելչութիւններ-

րի հետ, մարդոց ունեցած բոլոր արժանաւորութիւնների ու գործերի հետ կիսախէնր արդիօք երբէք։ Պատերազմներն ոչնչացուած են հազարաւոր գերդաստանների բարօրութիւնը, զրկուած են ամէն թիւնը կորցնել են տալի մեղ մեր փառքն ու պատիւը—բայց ոմ կարող է մնառնալ այն երկնքին, որ տաւարինութիւնն իչեցնում քո տարիք մէջ։

Ինչպէ՞ս գոհ եղէք։ Ա՛յնպէս տար անելու գործդ՝ որ երբէք պատճառ չունենաս ինքդ քեզ արհամարհելու, և դու՝ քո համեստ սրտաբին հանգամանագրդ մէջ անգամ՝ մանկանաւոյն մարդոց մէջ ամենաբազդատ տրների մէջը կլինիս։ Այն ժամանակ դուն չես նախանձիլ շռայլութեան անձնատուր անառակին, որ իւր թոյլ վարքին համեմատ զուարճութիւնների մէջ գժբախտ է, որովհետև խղճմտանքի չմեռնող որդնը միշտ կրծում նորա սիրտն։ Այն ժամանակ դուն չես նախանձիլ հպարտին, որոյ անարգասր գործերն ծռեւից մանն են գալիս ուշաստականների համար։ Ոս ներքին երջանկութիւնդ չի խափանվիլ. քո ունեցած հարստութիւնդ կգայ քո հետդ յաւիտենական կեանքը. քո պանգդ, ինչպէս ասում Սուրբ Գիրքն, երկնքում է։ Պատճառ որ՝ ինչ որ դուն ձեռք ես բերել քեզ համար, այն առաւելութիւններն են, որ ունեցել ես, ոչ թէ քո ապահանագյուս մարմնոյդ համար, այլ քո անմահական և անմահ էութեանդ համար, որ քո մէջդ կեանք ու գոյութիւն ունի, քո հոգւոյդ համար, որ Աստուածանմանն է։

Գոհ եղէք աչքաբնիս վերայ՝ երբ նման մոլորեանդէք։ Նորանցից մի պահանջիլ որ աւելի կոտրուած լինին քան թէ արդարի որ ինչ դիմաստիրը նոցա չիմաստութիւնները, նոցա մունչութիւնները. բայց նոյն իսկ այդ մարդոց՝ որոնց անկատարութիւնների համար մի դատիլ, այլ համբերութեամբ տար։ Աստուած եղ՝ ողորմէ համբերութեամբ նոցա թերութիւնները։ Ոս արդասաւորդ, քո բարկութիւնդ, քո պարտաւորդ ուրիշներին՝ նորանց դժուար կիսիսի, եթէ որ քո բարութիւնդ ու խելօքութիւնդ նորանց չլաւացնի։ Հակառակ կերպով վարուելովդ հպարտները կաւելացնեն իրանց հպարտութիւնը, համակարները կաւելացնեն իրանց համակրութիւնը, խաբեբաներն ու վեղծաւորները աւելի խորամանգ ու աւելի նենգաւոր կդաւնան միայն։ Մարդ չկայ աշխարհումն, որ բոլորովին վչացած

լինի. բայց մարդ էլ չկայ, որ կատարեալ լինի՝ ու ոչ մի սխալմունք չունենայ։ Ամեն մի մարդու մէջը մոխիկ տուր այն քանին, ինչ որ յարգելի է նորա մէջն, այն ժամանակ կտովրես դու նորան սիրել. նորա սխալանքը այնչափ գայթակղական չի երևիլ քո աչքիդ. նա, երբ որ կզգայ, որ դու նորան համակրում ու պատիւմ ես, անշուշտ սիրայդ սէր կհատուցանի։

Գոհ եղէք ֆաբրկանցից, մանաւանդ նրանցից, որոնց հետ ընտանեկան հաւասար շրջանի մէջ ես ապրում, ու մի պահանջիլ, որ նորանք ամենքը ++ խելքդ ունենան, ++ մտքիդ տէրը լինին, ամենքն էլ քո գաղափարովդ գործեն, ամենքն էլ նոյն սիրտն, նոյն յօժարութիւնները ունենան, նոյն տրամադրութեան մէջ լինին, ինչ տրամադրութեան մէջ որ դու ես գտնում։ Այդպիսի պահանջմունքներն, այդպիսի կամապաշտութիւնն ինչպես աեղի կունենայինն ու կյարմարէին այն յարգանքի հետ, որ դու պէտք է ունենաս գէպի քեզ, եթէ որ զգում ես, որ քո եղբայրդ կամ կինդ, կամ որդիդ, կամ աղջիկդ որևիցէ կերպով մի բան՝ սխալ ուղուղ հասկանալով, կամ սիրտները տեղը չլինելով, կամ քեզանից ցաւելով, քեզ հետ սառն են վարվում, կամ քեզանից երես են շուռ տալիս, փորձիր անգադար՝ ամեն մի արդար զոհողութեամբ՝ ամեն մի աշխատութեամբ՝ և բանը պարզելով, քո կողմից սիրտդ ամբողջապէս նորանց առաջը՝ գրքի պէս բաց անելու, դնելու, թէկ կարդան մէջը։ Մի դադարիր սև սև ամպերը ցրուելու, որ ձեր մէջը հաւաքուել են։ Սէրն ամենամեծ օրհնաբեր զօրութիւնն է աշխարհիս վերայ, որովհետև սէրն ինքն աստուածային ճագումն ունի. սէրը կարող է դեռ այնտեղ էլ հրաշքներ գործել, ուր որ ամենաստուր խելքը յոպղթելուց հրաժարվում է։ որովհետև իւր մէջը բաւական ոյժ չէ գտնում, որ պէտք եղած ազդեցութիւնն անի։

Աստուածանից, ինքդ քեզանից և ուրիշներից գոհ լինելդ պէտք է. բայց գոհ անելն էլ է պէտք։ — Ի՛նչպէս ինքդ քո մէջդ բաղդաւոր կհամարէիր քեզ, եթէ որ իմանայիր, որ մի մարդ քո պատճառով՝ քո յանցանքով վշացաւ։ Թէև մեր ձեռքին չէ ամեն մի մարդու բաղդաւորեցնելը, բայց մեր ձեռքն է՝ այն՝ այն զգուշութիւնն, որ պիտի ունենանք, որ ոչ մի բարի մարդ մեր պատճառով իւր հոգւոյ հանգստութիւնն ու խաղա-

ղութիւնը չկորցնէ։ Այդքանն էլ անելու, շատ բան արած կը-լինի՞նք։ Ու ինչ որ մենք մեր մի ամենափոքր եղբօրն, այսինքն է՝ մի հասարակ, խեղճ կամ անփորձ մարդու համար անում ենք, հէնց մեզ համար ենք արած լինում։ Ով որ ուրիշի սըխրաբաժան վերայ մտիկ է տալիս առանց սիրտը շարժելու՝ և նորա ցաւը մեղմացնելու, իւր համար տրտմութիւն է պատրաստում, իւր հոգին զրկում է մի երկնային երջանկութիւնից։

Գո՞հ լինել։—Այն բաղդաւորութիւնն, որ ուրիշները մեզ համար պատրաստում են, այն ուրախութիւնն որ մենք պատճառում ենք մեզ ծանօթ մարդոց, մեր սրտի սերմանածներն են միայն, որոնք շուտ՝ թէ ուշ սուրբ հունձք պէտք է բերեն։ Այն բարի բանն, որ մենք անում ենք, որչափ էլ որ փոքր լինի՝ մի կենդանի ջրի նման՝ ետ է հոսում միշտ դէպի մեզ ու մեր վերայ։

Գոհ լինել, գոհ անել։ Եթէ որ այս հիմնական՝ ոսկի կանոնը, ժողովրդի հետ ունեցած դրսի աւելի մեծ յարաբերութեանդ մէջ պահել ու գործով կատարել չես կարող, երբ որ քո հանգամանքներդ այնպէս են, որ հարկադրուած ես աւելի քո ընտանեկան կենացդ խաղաղիկ սահմանից դուրս չգալ, ու քո համեստ կոչմանդ գաղտնի մէջ միայն մնալ, պարծունէութեան աւելի լայն ասպարէզ չունենալ—աւելի լաւ է քեզ համար։ Ով որ արտաքին աշխարհի հետ աւելի շատ և աւելի մերձաւոր՝ կամ մտերիմ յարաբերութեան մէջ է գտնվում, այնպիսի մարդը պէտք է ունենայ աւելի այժ էլ, որ ամեն փորձութիւններին և աշխարհիս ամեն վիրաւորանքներին դիմանալ՝ կամ դէմ դնել կարողանայ։ Այս պատճառով քիչ են այն մահկանացու մարդիկն, որ միայն օտարների հետ մշտական՝ բազմազբաղ յարաբերութեանց մէջ լինին՝ ու կեանքի ամենամաքուր բաղդաւորութիւն գտած լինէին։ Ընկերական յարաբերութեանց լայնանալովն ու մեծանալով՝ սովորաբար կրքերն էլ են աճում և աւելանում, և քանի որ մենք աւելի ենք մեծանում, բարձրանում, նոյնչափ աւելի մեծ կլինի գըլուխը պտոյտ եկողի համար բարձրութիւնից ցած ընկնելը։

Սորա համար ես գուշելի եմ համարում իմ բարեկամական՝ քաղցր ու համեստ կեցողով կեանք անցկացնելս։ Եթէ որ լսում-լինքս իրանց բոլոր սրտովն ինձ սիրում են, Աստուած էլ տա-

լիս է ինձ այնչափ, որ մենք կարօտութիւն չենք քաշել. եթէ որ մի մաքուր, մի անպղտոր զգացմունք կայ իմ սրտիս մէջն, ու հաւատարմութեամբ կատարում եմ ես իրրև քրիստոնեայ՝ դէպի իմ եղբայրակիցներս ունեցած իմ պարտաւորութիւնս, նշանակում է ձեռք եմ բերել ամենաթանկագին բաղդաւորութիւն, որ այս անցաւոր աշխարհիս մէջ կարող է տրուել մի մահկանացու մարդու։

Սորանից աւելին չեմ ուզում։ Սորանից աւելին չեմ էլ կնդրում իմ երկնաւոր Հօրից ու Աստուածանից։ Կարելի է, որ երկնքից կրակ իջնի ու իմ տունս տեղս այրի. կարելի է, որ ջուրը գայ, իմ ունեցած չունեցածս առնի, տանի. կարելի է, որ հիւանդութիւնս իմ ոսկորներս ցամաքեցնի, չորացնի, կամ իմ սիրելի զաւակս իմ ձեռքիցս առնի, կարելի է, մահը հէնց ինձ տանի — ես վախենալու, սիրտս դող ընկնելու բան չունիմ, եթէ որ ինձ մնայ միայն իմ գերագոյն բաղդաւորութիւնս։ Ա՛վ իմ երկնաւոր Տէր և Հայր, այս գերագոյն բարիքը պահիր ինձ և իմոցոց համար ՓՈ անչափ ողորմութեամբդ ու անբաւ գթութեամբդ։

(Թարգմ. գեղմ.) Դրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց.

ՏԱՐԻՈՑ ՎԵՐՋԸ.

(ՅովՔ ԺԱ. 7)։

Հոսանքը՝ աղմկուած, ձայներ հանելով, կատաղաբար վազում է կապոյտ ալիքների մէջ. այստեղ յուզվում, ուռչում, բարձրանում է. այնտեղ՝ փշրվում, ցրվում և փրփուր է դառնում։ Աղբիւրների սրընթաց և անկայուն ջրի նման ամենայն բան իմ մօտից վազելով, անց է կենում, անհետ կորչում, մի երազի պէս։

Այնտեղ էլ մոխ. անշարժ ընկած յորձանքի վերայ հրափայլ նկարվում է արեգակի պատկերն։ Իւր ճառագայթներով թափանցում է ջրի ամենախոր տեղերն ու երբէք չեռ չի քաշվում, այլ աւելի ևս ձայներ հանելով, վազած ժամանակը՝ կատաղաբար յուզվում։

Վազիր, գնա արագ, հասիր սրընթաց։ Քո մրրկուած կատաղի ալիքներիդ հետ կարող ես ինձանից խլել, տանել ամենայն բան, ինչ որ ունիմ. քո ջրերիդ ամենախոր տեղը՝ բոլորովին տակաւին, միայն կարողանամ Աստուծոյս և յաւիտենական կեանքի վերայ ունեցած հաւատս ազատել ու պահել, որ ինձ կմնայ այս իմ շուտ թռչող, անցկացող երկրաւոր կեանքումս, ու էլ ափսոսալու բան չեմ ունենալ, որ կորցրի։

Ժամացոյցի ճերմակ տախտակն՝ իւր վերայ գտնուած ալաքներովը՝ հասկացնում է ինձ, որ կեանքիս ժամերը մին մինի ետևից սրընթաց անց են կենում, գնում. մի տարի անց կացաւ իմ վերայ՝ մի շուաքի նման։ Ի՞նչ ցանկացայ արդեօք ես, ի՞նչ փոփոխութիւն եղաւ իմ մէջս։ Ի՞նչ պիտի լինիմ այսուհետև և ի՞նչ կլինի իմ հետս։-Ի՞նչքան հեռու գնացի՝ և մինչև ո՞ր տեղ հասայ։ Ի՞նչ շահուեցայ, ինչի՞ տէր դարձայ։ Այժմ աւելի գո՞հ եմ արդեօք, քան թէ մի տարի առաջ։ Ո՞չմը պիտի շնորհակալ լինիմ՝ իմ խելօք և հաստատ սկզբունքներին, որ ունիմ, թէ անակնուռնելի հանգամանքներին ու դիպուածներին, որ առանց իմ մէջ խառնուելուս, պատահեցան։—Համաւելի դժբաղդ եղայ արդեօք։ Ինչո՞ւ մի տրամութիւն կայ իմ սրտիս մէջը տարուոյ այս վերջին ժամերուսմն, և այդ բանի մէջ ո՞վ է մեղաւորն, ուրիշնե՞րն, թէ, կարելի է, հէնց ես ինքս։

Ոչ մի հին տարի չէ անց կենում մեզ համար և ոչ մի նոր տարի չի գալի մեզ վերայ, որից անբաժան չլինեն այս և այսպիսի հարցումներ, որ մարդս չանի ինքն իրան։ Կար մարդ, որ սիրով չէր ուզում մտիկ տալ անց կացած ժամանակի վերայ։ Ինչո՞ւ. նորա համար, որ անցեալն իրան տեսակ տեսակ ձախորդութիւններ բերեց—մարգկանցից զզուանք ունեցաւ, ունեցածը պակսեց, իւր սրտին թանկագիններըը մեռան, Աւելի սիրով իւր աչքն ուղղումէ այն բանի վերայ, ինչ որ պէտք է գայ։ Ուզումէ գալու ժամանակը խաղաղիկ ու անվրդով յոյսերով կմտմտումէ իւր ցանկութիւններն։ Իւր երևակայութեան առաջ ձմեռն եկած, նստած ձեան այն կոպճն մի նոր գարնան է բացվում իւր համար։ Որքան անակնկալ բաներ կարելի է ի-

բան յուսալ։—Մի ուրիշն, որ մարդկային վիճակի վախճանութեանն անտեղեակ չէ, ուրախ սրտով յետ է մնում տալի անց կացած տարւոյ վերայ, որ իրան շատ ուրախութիւններ բերեց։ Բայց սիրտը դողումէ ապագայի չարիքից, ինչու որ կարող է փորձանքների հանդիպել և աւելի կորցնել, քան թէ որչափ որ աշխատել է ու ձեռք բերել։ Ո՞վ է իմանում։ կարելի է՝ մի անակնկալ բան կպատահի և իր բոլոր աշխատութիւնները կիսատ-պռատ անի։ Ո՞վ է իմանում. կարելի է, որ մեծ աշխատութիւններով ու չարչարանքով հազիւ ձեռք բերածը՝ փրփուրի նման, չի փուել գալ՝ ու չի ոչնչանալ։

Սովորաբար այս ու այսպիսի զգացմունքներով է ողջունում մարդս նոր տարին իբրև նոր ժամանակ, որ գալիս է։ Ամեն տեղ սովորութիւն դարձած ընդհանրապէս ասելը նոր տարին՝ արդէն մեր մանկութեան օրերից սկսած՝ մի շատ նշանաւոր բան դարձած է մեզ համար մեր մտած նոր տարին. ու մեծ խորհուրդ ունի ամեն մի մտածող մարդու համար, ուստի և խորհրդածութիւններ է անել տալի մեզ. աւելի նոր տրամադրութիւն, աւելի նոր հակումն է տալիս մեզ՝ քան թէ մի ուրիշ ժամանակ՝ մտածելու նախախնամութեան ճանապարհների վերայ։ Ես էլ այս իմ առանձնութեան ժամումս, որ իմ բարեպաշտական մտածմունքներիս եմ նուիրում, հէնց այդ ու այդպիսի խորհրդածութիւններով անցկացնեմ այս թանկագին ու անգնահատելի ժամն։

Անշուշտ՝ ոչ մի զգայմունք, առաջիկայ տարւոյ վերայ մտածելուս ժամանակ, այնչափ վառ չէ իմ մէջս, որչափ որ այն ցանկութիւնն, որ ունեցայ իմանալ թէ՝ ինչ բաներ կպատահեն ինձ, ինչեր կգան իմ գլխիս, բազդ՝ թէ անբազդութիւն, ինչ վիճակ կբերի ինձ այս նոր տարիս։ Բայց և զգում եմ, որ առաջուանից այդ իմանալն իմ մարդկային ուժից վեր է. Աստուածեղական նմատուութիւնն մեզ արգելել է ապագայի գողը գտնել մի փոքր բարձրացնելու։ Այդ բանն անել եթէ կարողանայի, իմ ապագայի վերայ ունեցած քանի քանի յոյսերս կոչնչացնէր՝ և իմ սրտիս մէջը քանի ու քանի տեսակ երկիւղ կբջէր։ Սորա համար՝ եթէ որ իմ իշխանութեանս տակը լինէր ու ձեռքիցս գար այսօր՝ առաջուանից իմանալ որոշ և ճիշտ կերպով բոլոր հետագայ տարւոյ մէջն ունենալու կեանքիս մէջ

ինձ պատահիլիքն ու իմ անելու բաներս չեի ուզենալ իմանալ. «ինչու որ՝—սարսափում եմ ասելու—պէտք կլինէր որ մարիկ ապի ու տեսնէի նոյնպէս և այն անխելքութիւնները, որ ես պիտի անէի, որով հիմն կդնէի ինքս իմ ձեռքովս իմ շատ անբաղդութեանց։ Մխայն մէկին կվայելի ամենագէտ լինել, միայն ամենատուրբ և ամենիմաստ Աստեղծողին։

Թէև շինում եմ ինձ համար այս ու այն գեղեցիկ նախագծերն ու մտածում թէ՝ ինչ իմ սրտիս ցանկալի ու սիրելի բան կարող էր լինել, եթէ որ այս ու այն ծածուկ ցանկութիւնները կատարուէին։ Ես իմ յոյսերիցս փոքրիկ դրախտներ եմ շինում, և ցաւ կուտայ սրտիս, եթէ որ ոչ մէկն էլ իմ բոլոր յոյսերիցս ինձ չպարգևուէին։ Դորա համար սիրով մտածում եմ այն բանի վերայ, ինչ որ պիտի անեմ, որ իմ կողմից իմ ցանկութիւնները կատարուելը յաջողեցնէի։ Ինչու որ յետոյ բաղդին կթողնէի մնացածը։

Բաղդին։ Իսկապէս ինչ պիտի հասկանամ ես բաղդ ասելով։ —Բարեյաջող հանգամանքներ, բարեյաջող դիպուածներ, որ պատահմամբ լինում են։ Ո՛չ. ոչ մի լաւ՝ կամ վատ վիճակ չէ վիճակվում մարդուս կոյր դիպուածով համաշխարհական վիճակների մէջ ամենայն բան մին մինի հետ ամենատերտ կապով կապուած է։ Ա՛յսօրուայ վայրկեանի հետ կապուած են ապագայ դարերը. մի երեխայի արած գործի հետ կապուած են՝ աներևոյթ ներգործութիւններով՝ շատ անդամ ազգերի վիճակները։ Աշխարհների մի ուրիշ թագաւոր կայ, որ ամենայն բան առաջնորդում ու կառավարում։

Ա՛յստեղ մենք մեր յոյսերովն, ակնկալութիւններով ու ցանկութիւններով յանկարծ կանգ ենք առնում։ Մտածում ենք թէ՝ մեր ուզածով, մեր ունեցած խելքով՝ բան չի լինիլ. Ինչ-ՔԷՐՔԳՅԱՆ ՊՕՐՈՒԵՔԱՆ ՊԱՀՆ ԷՆ։ Ա՛յս մտածմունքը մեր սրտի մէջը գալ է քցում։ Իզուր է, որ մենք փայլուն դրախտներ ենք շինում մեր երևակայութիւններով—մենք ՏՊԱՆՈՒՄ ԷՆ միայն. իսկ Աստուած ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ, ՓՈՉՆՈՒՄ է. խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ։ Ա՛յն ամեն բանն, որ մենք ապագայ ասրուայ մէջ՝ մեր ունեցած ակնկալութիւններից երազում ենք, կարելի է, որ մէկն էլ այնպէս դուրս չի գայ և այնպիսի բաներ պատահեն, որոնց վերայ մենք այսօր չենք մտածում։ Մենք

Գերագոյն էակի իշխանութեան տակն ենք, և գեղեցիկ է մեր կենաց ճանապարհի վերայ, ու Աստուած մեր ձեռքիցը բռնում է, ինչպէս որ մի երեխայ առիկ առիկ է անում հայրն իւր հագուստի կապից կամ ձեռքը բռնած։ Աստուած է գառաղն, Աստուած է անորինողն, Աստուած է առաջնորդողն և ինչպէս անհասանելի են նորա դատաստաններն, ինչպէս անքննելի են նորա ճանապարհները։

Այս բանն հասկանալս իսոր մտածութեան մէջ է ինձ քցում։ Ես մանիկ եմ տալիս իմ ետևս, իմ անց կացրած ժամանակիս վերայ, և մինչև անգամ իմ տղայութեանս օրերին, իմ պատանեկութեանս թառամած առաւօտեան արշալուսի վրան եմ մտիք անում,—ու խոստովանում եմ դողալով—, որ Նախախնամութեան ճանապարհները մութ են։ Բանի ու քանի բան պատահեց, ու ես բաղդաւոր չեղայ։ Ես կցանկայի հաւատալ թէ՝ ինձ համար աւելի լաւ կլինէր, եթէ որ ուրիշ վիճակ ունեցած լինէի. բայց և այնպէս պատահեցաւ ինձ այսպէս՝ և ոչ ուրիշ կերպ լինել։ Ինչո՞ւ այսպէս եղաւ, հարցնում եմ ինքս ինձ։ Մանիկ եմ տալիս իմ առաջս՝ ապագայի ամպերին, որ իմ կեանքիս դեռ և ես ինձ մնացած օրերը պատում են, և խոստովանում եմ ահ ու դողով, որ Նախախնամութեան ճանապարհները մութ են։ Ամեն իմ նախապատրաստութիւններս, իմ ապագս ու չապագս, որ իմ և իմայիններիս համար մի սիրած նպատակիս հասնեմ, կարելի է, զուր են. և այն, ինչ որ սկսում եմ անել, կարելի է, բոլորովին ուրիշ հետևանքներ ունենայ, քան թէ ինչ որ մտքումս դրած էի։ Ինչո՞ւ է այդպէս։

Մարդս չէ կարող ապահով կերպով որ և իցէ նպատակ իւր առաջն ունենալ՝ բացի այն բանից, ինչի որ կարող է հասնել իւր ունեցած ուժովն. ուրիշ ամեն բանի մէջ պէտք է հողեղէն մարդս առանց չափից դուրս յոյսեր ունենալու, առանց չափից դուրս վախենալու, իւր ունենալու վիճակը հանգիստ սրտով և աներկբայ յուսով ակնկալի այն գերագոյն էակի ա. մենիմաստութիւնից ու բարութիւնից, որ իւր սիրուցը մեզ կեանք է պարգևել։

Եւ ի՞նչ բանի կարող ենք մենք ապահով կերպով հասնել մեր ուժով. և ի՞նչ է այդ նպատակն որ կարող ենք ունենալ։ Այդ նպատակն է՝ մեր հոգին կատարելագործելը, մեզքի հետ

կատարելով, սուրբ հաւատով հաւատալով Աստուծոյ։

Ի՞նչ վճռակ էլ որ տարբե՞ր վճռակ՞ի քա՛ղ ինձեան վար՛ վէ՛. էայց տարբե՛ր է ինչո՞ւ ա՛ելի վատ իր ո՞անէցած վճռակին համար։ Շատ անգամ պահասում է նորան հոգւոյ մեծութիւնն, որ իւր կարծած չարիքն իբրև Աստուծոյ պարգևած բարիք իւր օգտին բանեցնի, որպէս և իւր կարծած բազդաւորութիւնն արժանաւոր կերպով տանի։ Ա՛յս տեսից է դուրս գալի կեանքի ամենայար դէպքերին բ՛ը՛ը՛ն։

Ա՛յո՛, կրկնում եմ ես, և այս մտածութիւնն նորին չափ մեծ խորհուրդ ունի, որչափ ճշմարիտ էլ է թէ՝ հոգածին մարդոյ վիճակուած ոչ մի վիճակ ըստ ինքեան վատ չէ. միայն մեղկասնացու մարդը շատ վատ է իւր վիճակին համար։ Եթէ բարիք ունի, աւելի մեծ բարիքների եռանդից է ընկնում, Աստուծոյ իրան պարգևած միջոցներն իւր հոգին աղնուացնելու և իւր նմանն մարդոյ բազդաւորացնելու համար բանեցնելու տեսը։ Եթէ չունևոր է, նախանձում է իրանից աւելի բազդաւորներին առանց մտածելու թէ՝ ամենայն երկրաւոր բազդաւորութեան բարիքները վչանալու բաներ են միայն։ Եթէ հիւանդ է, փափագում է առողջ լինել. բայց իւր ապականացու մարմնոյ ցաւերը դուրս տելն են նորան համոզում մտածել իւր հոգւոյ ազատութեան վերայ, որ անմահ լինելու համար է ստեղծուած։ Եթէ առողջ է, աշխարհիս տեսակ տեսակ վայելչութիւններին ու զբօսանքներին խելքն ու միտքը տալով, շատ քիչ է պատահում նորան այնչափ մտածմունք ու խոհեմութիւն ունենալ, որ իւր Ներ+ին առողջութեան պատուական մասը լաւ պահպանի։

Մտածիր ուրեմն և հասկացիր, որ ամեն մի վիճակ, որ եկող տարուայը կարող է քեզ վիճակուիլ, աշխարհիս մարդոց խելքովն՝ քեզ համար ընդունելի լինի՝ կամ անընդունելի, հաճելի՝ թէ անհաճոյ ու քեզ տխրեցնող, քո հոգւոյդ մի սուրբ տրամադրութեանը համար նպաստաւոր է։—Ա՛յս է այն նպատակն, որին որ դու քո ունեցած ուժովդ հասնել կարող ես, ուրիշ մի հաշիւ չանես քո մտքում ու չկարծես՝ թէ ուրիշ բաների էլ կարող ես հասնել անկասկած։ Այն ժամանակ միայն կարող կլինիս ինքդ քեզ համար ասել թէ՝ դու իսկապէս իմաստուն ես. այն ժամանակ Աստուծոյ ճանապարհներն էլ մըւթ

չեն լինիլ քեզ համար, ու դու քո վիճակից բերմունքն ուզիլ լաւ կհամարուս։

Այս մտածութիւնն այնչափ մեծ միտք ունի, որ ինձ համար երջանկաբեր խորհրդածութիւնների առաջ պիրիւր կարող է դառնալ։ Սորա համար չեմ ուղիլ, որ իմ ուշադրութիւնները միշտ վրիպին, այլ շատ անգամ իմ յիշողութեան մէջ կարծարձեմ ու կնորոգեմ։ Եւ որովհետեւ կատարելապէս համոզուած եմ, որ ամեն ինձ պատահածն Աստուծոյ անօրէնութիւնովն է լինուս, ինքս ինձ ու իմ այժմու դրութիւնս կքննեմ կտեսնեմ թէ՝ արդեօք ես ինձ ու իմ ներկայ վիճակս իմ անմահ հոգիս մոռնալու համար գարձ ածել եմ։ Եւ վիճակիս ամեն մի անգամ փոխուած ժամանակն ինքս ինձ կհարցնեմ թէ՝ ինչ աղդեցութիւն կարող է ունենալ ու պէտք է ունենալ այս պատահմունքն իմ մոռածոլութեանս վերայ։ Այս հանգամանքներիս մէջ ես՝ իբրեւ քրիստոնեայ, իբրեւ Աստուծոյ զաւակ, իբրեւ անվախճան գոյութիւն ու կեանք ունենալու համար կոչուած հոգի՝ ինչ և ինչպէս պիտի անեմ։—Եւ ինչպէս որ իմ հոգիս՝ ուրախութիւններ ու ցաւեր ունեցած ժամանակն՝ աւելի ջերմեռանդութիւնով է բարձրանում վերատանում դէպի Աստուած, արդեօք իմ աչքերս էլ աւելի կլուսաւորուին և լոյս կտեսնեն այնտեղ, ուր որ այժմ իմ գլխիս եկած շատ բաների մէջ մնում ու խուսափ պատած է երեւում։

Աստուծոյ ստեղծած ամեն արարածների մէջ ներգործութիւն կայ։ Եւ նա գրուած մեծ կարգն իանգարել է յանդգնում, ինքն իրան է վնասում։ Մոլութիւնները ու կրքերն, որ մեզ դէպի չարն են տանում, սիեղերական օրէնքի դէմ հակառութիւններ են։ Ոմ որ ապրում է միայն այս աշխարհիս փողի, պատիւների և զգայական վայելչութիւնների համար, իւր գլխին եկածների նպատակների մէջ խառնակենդարու ընել չհասցնելու բաներ կգտնի։ Յայտնի տեսնում է, որ այդ պիտի մորդը չէ իմացել գեռ և իւր հոգին Աստուծոյ հետ համաձայնացնել։ Ոչ թէ իմաստութեամբ կառավարող նախախնամութեան ձեռքն է մորգ կային կեանքի կարգերը խառնել, շփոթել, այլ մեր անհիմն և ունայն կարծիքն ու ինքնահաւանութիւնն է այս շփոթները բերել, որովհետեւ մենք, ինչ որ յաւիտենական Հայրն յաւիտենականութեան համար է ստեղծել,

ուզեցել ենք մեր ունայնասիրութեան հաշուի մէջ գրել։

Աստուածոյ ստեղծած քաղաքն ինչքան մեծ ներդաշնակութիւն կայ։ Ինչ որ ստեղծել է նա, բոլորն էլ բարի են։ Միայն նայելով թէ՝ ինքս որչափ բարի եմ, այն չափով էլ երկնաւորի երանելի թագաւորութեանն եմ պատկանում, և ամեն մի մարդ ուսումնական վիճակին մէջ Աստուծոյ գիտութիւնն ու ողորմութիւնն է տեսնում ու ճանաչում։ Երանի թէ այս ճշմարտութեան մէջ էլի հաստատ համոզուած լինէի ու մնայի իմ կեանքիս այս նոր տարուանս մէջ էլ, որ իմ առաջս է։ Այս ճշմարտութեան մէջն է ամենաբարձր իմաստութեան միջուկն և այդ պիսի իմաստութիւնից յառաջ եկած սրտի գոհութիւնն։ Այս ճշմարտութիւնը հասկանալուս, իմ հանգամանքներս կշռելուս մէջ որած քանի ու քանի քաշած ցաւերիցս ազատ կմնայի։ Քանի ու քանի արտասուք պակաս թափած կլինէի անց կացած տարիներում, քանի ու քանի փոշիմանութիւն ու ափսոսանք պակաս կունենայի հետագայ տարիներում։

Ո՛վ Աստուած, ով իմ Արարիչ, ով իմ ապրուստիս թագաւորն։ Այս մտածութիւններով եմ ցանկանում ընդունել և ողջունել իմ գալու օրերս։ Ինչ վիճակ էլ որ Դուք լինէ համար ունենալ կամեցած լինիս, Քո հայրական սիրոյ վերայ վըստահ լինելով, խոնարհութեամբ ու հնազանդութեամբ կընդունեմ։ Եւ երբ որ իմ դէմս եկած մի բան՝ իմ ունեցած վիճակիս մէջ ինձ ընկճելու լինի, որ մարդիկ անբաղդութիւն են անուանում, ինքս իմ մէջ կմտածեմ ու կասեմ թէ՝ չէ, անբաղդութիւն ասած բանդ չկայ, այլ այն է, որ մարդս իւր վիճակին մէջ իւր դէմին եկածն անբաղդութիւն է համարում ու իւր համար անբաղդութիւն շինել ուզում։ Բայց Աստուած բուն սէր է և մարդոց միայն բաղդաւորութիւն պարգեւել է կամենում։ Եւ երբ որ ցաւն ինձ կիսարի, երբոր արտասուք կթափեմ, երբոր կկարծեմ, որ չափից դուրս քաշած ցաւերիս էլ չեմ կարում դիմանալ, հոգիս բերանս է եկել, էլ ինձ ապրելու ճար չկայ, մահս աչքովս սիրտ տեսնեմ, այն ժամանակ ինքս ինձ կքննեմ ու կհարցնեմ թէ՝ ինչըն եմ այսպէս անփառնելի ցաւ տալու։ Անցաւոր բանին սաստիկ կերպով սրտով կպած լինելս չէ արդեօք։ Մի՛թե դորա համար արտասուք թափելը կարժէ։ Մի՛թե մի բան կորցրել եմ, քանի որ ինքս ինձ կորցրած

չեմ՝ ոչ էլ Քեզ՝ ում իմ ստեղծող Աստուածս՝ Մխիթէ միայն մի կարճ ժամանակ այս աշխարհումս ապրելու համար եմ այս կեանքումս։ Մխիթէ չպիտի՝ կարելի է՝ շատ մօտիկ ժամուն ամէն բան՝ մինչև անգամ իմ դիակս կորչեմ ու չեմ թողնեմ այս աշխարհումս։ Ա՛յն ժամանակ ես ինքս իմ թաւալած արտասուքիցս կամչեմ ու կզօրանամ։ Ա՛յն ժամանակ իմ հոգիս՝ իւր թուլացած դրութիւնից՝ դարձեալ այժ կտանայ՝ Քո իմաստուն անօրէնութիւններիդ վերայ անթերի հաւատով մտիկ կտայ՝ ու էլ երբէք չի լքանիլ։

Քո ստեղծած աշխարհիդ մէջ ամենայն բան ներդաշնակութեան մէջ է։ Ա՛յսպէս եկով ասիս էլ իւր ամենայն բերմունքով Քո խորհուրդներիդ հետ գեղեցիկ համաձայնութեան մէջ կլինի։ Սորա համար ապաստամ եմ ես նոր տարուս՝ որ գալու վերայ է՝ հանդիսաւոր ու ուրախ կատարելու սրտի հանգստութիւնով՝ լի վստահութիւնով և անսահման հնազանդութիւնոմս՝ ինչու որ վճռել եմ մնքումս՝ որ ես էլ միշտ իմ լաւագոյն համոզմունքներիս հետ ու քո անօրէնութիւններիդ հետ համերաշխ լինիմ՝ թէ ես և թէ որոնց որ Դու ինձ տուել ես։

Բայց՝ իմ երկնաւոր Հայր ոչ թէ ինչպէս որ ես կուզեմ—ո՛չ՝ ո՛չ՝ այլ ինչպէս որ Քո կամքդ է։ Սիրուժիմ այն ինձ հաւատարիմ հոգիներին՝ որոնց որ Դու ինձ պարգևել ես։ բայց իմ նոցա վերայ ասստիկ շատ սէր ունենալս կարող է ինձ թուլութեան տանել ու անարդարութեան։ Պէտք է այն մտածմունքն էլ ինձանից հեռու չլինի՝ այլ իմ սրտիս շատ մօտիկ՝ որ ինձ համար ամենաթանկագիններս էլ կարող են ձեռքիցս առնուիլ։ Ո՛հ՝ երբ որ մի օր իմ սիրտս կկոտրուի՝ այն ժամանակ—արդէն սովորած լինելով այն մտածողութեանս որ աշխարհիս վերայ մի անգամ միմեանցից քաժանուելը կայ ու պէտք լինի՝ որ կարելի լինի երկնքումը իրարու նորէն տեսնել՝ այդ իմ կոտրած սիրտս ինձ յուսահատութեան չի տանել՝ այլ Քեզ փառք կտայ՝ այո՝ ամէն իւր ցաւերի մէջ քեզ փառք կը տայ։ Ա՛յն ժամանակ կասեմ մնքումս թէ՝ Դու առրանց իմ սրտիցս կորեցիր՝ իմ սրտիցս՝ որ նորանց կպած էր այս աշխարհումս։ Ա՛յն ժամանակ իմ սիրտս աւելի յայտնի կերպով միայն կփափագի որ իմ աչքըս քեզեմ յաւիտենական կեանքին՝ այնտեղ՝ ախ՝ այնտեղ՝ ուր որ պիտի կրկին տեսնեմ նորանց՝ որ կորցրի՝ որոնց

հոգին այս աշխարհումն այլ եւս չէ ժպտում ինձ, և որոնց հոգ դառնալու մարմնի վերայ մեռն են գալի Ես մրրկալից քամիներդ ու անձրևի թուխս թուխս ամպերդ։

Ես հանգիստ եմ սրտով. ամեն մի իմ գլխիս գալու բանին պատրաստ եմ։ Աստուծոյ թագաւորութեան մէջ ամենայն բան ներդաշնակութեան մէջ է. ուրեմն ինչպէս կարելի է, որ հոգիների համերաշխարութիւնը կտրուի։—Աստուծով գնում եմ նոր տարւոյս առաջն։

(Թ՝աթգ. գէրմ.) Վրիպոր Եպիսկոպոս Աղափիրեանց.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՍԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ

(Շարունակ. և վերջ)։

Մարմնամարզութիւնն նպաստումէ նաև գեղասիրական կրթութեան, որովհետև դա մարդու, նախապատիւերի ամենագեղեցիկ արձասիքի մարմնական և հոգեկան ներդաշնակութեան զարդացնելն իրեն վերջնական նպատակ է դրած։ և ինչպէս որ Գէօթէն ասումէ, թէ գեղեցիկը և թէ բարին մի գերագոյ (ideal) է, որն երբէք չերևան չէ գար, սակայն նորա փայլն ստեղծող հոգու հաղարաւոր արտայայտութիւնների մէջ տեսանելի է լինում։ Գեղեցիկ է այն իրը, որի ձևն նորա գաղափարի (idee) ամենակատարեալ արտայայտութիւնն է և Պղատոնի ասելով մարդու գեղեցկութիւնը պէտք ստուածային գաղափարի արտայայտիչ լինի։ Մարդկային մարմինն մի ձև է, այն է, նորա մէջ եղած հոգու երևոյթն ուղղուած դէպի դպայական աշխարհ, և հոգու ամեն մի ազնուացումն պէտք է որ յայտնի փոխադարձ ներգործութիւնների միջոցին, որոնք հոգու և մարմնի մէջ տեղի են ունենում, մի ազնուացնոլ ազդեցութիւն առաջինի (մարմնի) վերայ ունենայ, ինչպէս, ընդհակառակն ձևի գեղեցկացումն առանց գաղափարի վերայ ներգործելու չըմնար. նոյն իսկ իմաստուն Սոկրատէսի տգեղ կերպարանքն այնպէս նորա գեղեցիկ հոգւով զարդարված էր, « որ նորա տգեղութիւնն՝ գեղեցկութեան փոխուեց »։ ամեն մի ցանցառ մարդու մօտ կարելի է նկատել թէ մի կարճ ժամանակ վարժուելուց զինի ձևի կազմութիւնն հոգու վերայ ինչպէս է ազդում։

Ա. ՁԵՒԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ.

1. Բոլոր մարմնի մասերի ներդաշնակ զարգացում.

Մարմնամարզութիւնն ամենից առաջ կազմակերպումէ ձև։ Մարդու մարմինն իւր անդամների կանոնաւորութեան, ներդաշնակութեան և հաւասարաչափութեան մէջ ինքնըստինքեան գեղեցիկ մարմնամարզական տեղի վերայ այնպէս գեղեցիկ կրվարժուի, որ նորա բոլոր մասերն հաւասարաչափ կզարգանան։ Վարժութիւնների մի ճիշտ դասաւորութեամբ պէտք չէ որ մի անդամ միւսի հաշուով զարգանայ ի վնաս միւս անդամների, այլ բոլորի վերայ պէտք է հաւասարապէս ուշք դարձնել։ Եթէ մենք ամեն օր այն երևոյթն ենք նկատում, որ շատ անգամ գործիքով ամենալաւ մարզուղներ քայլուածքի և կեցուածքի մէջ անտաշ և կոպիտ են, այդ տեսակ հետևանքը մեզ չըպիտի ուսումնարանական կանոնաւոր մարմնամարզութիւնից փախցնէ, որովհետև այն երևոյթը յատուկ է եկել շարունակ գործիքով մարզուելուց բարձ ի թող առնելով ազատ վարժութիւններ։ Ուսումնարանական մարմնամարզութիւնն ոչ դիտաւորութիւն և ոչ էլ ժամանակ ունի լարախազացներ պատրաստելու, նա աշխատում է ներգործել այն բանի վերայ, որ բազուկներ և ոտներ մի և նոյն ժամանակ մնանան և ամբանան իսկ կրծքի ծաւալը մեծանայ, այնպէս որ սկզբում տրուած պատկերի ձևը անփոփոխ և անվնաս մնայ, հէնց դրա համար անհրաժեշտ է որ թոյլ մասեր այնքան մարզուին ու վարժուին, որ նոքա միւսների հետ ներդաշնակութեան մէջ գանուին։

2. Ուժի լիութեան առաւելութիւն.

Եթէ որ մարմնի բոլոր մասերի ներդաշնակ զարգացումն ինքնըստինքեան արդէն մարմնի գեղեցկութեան համար մի անմոռելի նշանակութիւն ունի, այն ժամանակ նրա նշանակութիւնն ևս առաւել կըրարձրանայ, եթէ բոլոր անդամներ հաւասարաչափ ուժի լիութիւնն ստացած են։ Ինչ չափով մարդ ուժի լիութեան և կամքի ուժգնութեան մէջ առաւելած է, այնչափով ևս գեղեցկութեան մէջ կառաւելուի։ Գեղեցիկ չէ՞ արդեօք մի զօրեղ լեցուն կազմուածքով մարմին լի գործունէութեան ետանդով տեսնել։ Այս թէ տղաների և թէ աղջիկների համար միևնոյն է, միևնոյն է վերջիններիս համար այն պայմանով, որ կանացի վայելուչ տեսքը չըվատանգուի, որովհետև «ուժը սպասումիմ ես այր մարդուց, նա օրէնքի արժանաւորութիւնն կըհաստատէ, սակայն կինը միմիայն իւր վայելչատեսութեամբ տիրապետած է և տիրապետումէ»։

3. Ճիշտ որոշում (Präcision).

Նախ՝ ձևը իւր կենդանութիւն. ստանում է գործածութեան, կեցուածքի, գնացքի և պանազան ծռմռածուռ շարժուձևութիւնների մէջ։ Մարմնամարզու-

թեան մէջ ամրապնդած անդամներն ընդունակ են գառնում բոլոր շարժողութիւններ վստահութեամբ և որոշմունքով կատարելու։ Միմիայն շարժողութիւնների ճիշտ որոշման մէջ է կայանում անդամների գեղեցկութիւնը,— գնայածութիւն, դանդաղութիւն և ցրուածութիւն նորա հակառակ կողմերն են։

4. կեցուածք։

Բոլոր գեղասիրական յարաբերութիւնների հիմնական ձևը, որի մէջ մարդկային մարմինն երևում է պիտի երևայ, է կեցուածքը. որն և այդ պատճառով մարզական տեղի վերայ բոլոր վարժութիւններից առաջինն է համարւում և բոլոր վարժութիւնների մէջ տեղի է ունում, ոչ մի մարմնամարզական ժամ չանցնէր, ոչ մի վարժութիւն չկատարուէր, որի մէջ կեցուածքին մի շարունակ ուշադրութիւն չը նուիրուի մի գործիքով մարզուելիս և թէ ազատ վարժութիւններ կատարելիս։ Զէ՞ որ մարմնի ուղիղ կեցուածքը այն առանձնայատկութիւններից մինն է, որով Աստուած մարդուն կենդանիներից աղնուացրեց։ Եթէ նա չիրաւի տիրոջ ստեղծագործութեան մի զարդ պիտի լինի, պէտք է որ նա լինամուխ։ Մարմնամարզութիւնը հոգս է տանում այն մասին, որ աշակերտը ոչ թէ իրեն մեքենայ ձևացնէ այլ խօսքի համաձայն իրեն պահպանէ և շարժուի, այնպէս որ նորա կեցուածքը ամեն քնայածութիւնից ազատ, որոշ, ամուր, ջօրեղ և բնական լինի, որովհետև «մի վստահ դիրք» ասում է Ուուտսն, միշտ ախորժ ազդեցութիւն ունի, և ամենաամուր կեցուածքը մի և նոյն ժամանակ ամենավայելուչն է», և ընդունելով միայն որ նա սկզբնական (ճնշումից) լուռութիւնից ազատութեան բնականութեան է հասած։

5 գնացք։

Ինչպէս որ կեցուացքը կամքի ուժգնութեան աստիճանի հաւատարիմ պատկերն է, նոյնպէս և գնացքը ոչ պակաս վստահութեամբ որոշում է մարդու ամբողջ հոգեկան էութիւնն. նա խառնուածքի (Temperament) և հոգու տրամադրութիւնների հիմնական ձևերին համապատասխանում է փոփոխումէ դրանց համաձայն։ Սակայն նորա բոլոր փոփոխութիւնները, ինչ տեսակ էլ նորա սկզբնական մարմնի և հոգու յատկութիւնների հիման վերայ կազմակերպուած լինին, այնու ամենայնիւ կարող են և պէտք է որ գեղեցիկ լինին, դորա համար է որ գնացքը ամեն մի մարմնամարզական ժամին պիտի առանձնապէս խնամուի, որպէս զի նորան շարունակ վարժութեամբ ամրութիւն, վստահութիւն, հաւասարաչափութիւն, թեթևութիւն և ազատութիւն տրուի, որոնք ի միասին մի գեղեցիկ գնացք են կազմում, և որովհետև այդ, ինչպէս և պար և լող, մի զուգորդած մկանային շարժողութիւնների խմբից է բաղկացած, որոնք ամբողջի վերայ ներդաշնակաբար ի միասին ներգործումեն, ուստի պէտք է որ նորա իրենց ճիշտ որոշման մէջ (Präcision) հետ զհետէ այնչափ վարժուին, մինչև որ նորա կամքի իշխանութիւնից ազատուին, որի ազդեցութեան ներքոյ նրանց միայն խմբակցել և ուսանել հնարաւոր էր։ Թէ գնացքը և թէ կեցուածքը այն ժամանակ

միայն դեղեցիկ են, եթէ որ նոքա բնութեան, դիտաւորութեան և կամքի գարկի ամեն մի հետքը կորցրած են, նոքա այն աստիճանի վայելուչ կը դառնան, ինչ չափով որ կամքի դրդիչները հետացած են և մի դեղեցիկ բնութեան որպէս հետևանքներ ինքն ըստ ինքեան կը գարգանան.—Մի դեղեցիկ քալուածքը սովորացնելու համար առանձին նշանակութիւն ունին կարգերը, որոնք ներդաշնակ միմեանց մօտ լինելով և գանազան քայլերի չափաւոր փոփոխութեան քալուածքին մի առանձին վայելչութիւն և դեղեցկութիւն են տալիս։ Մի լացարձակ դեղեցիկ քայլուածք շատ հազուագիւտ է, բայց, ուր նա յերևան է գալիս, գարմեցնումէ մարդու մէջ, ինչպէս և ամեն դեղեցիկ բան, անպայման հաճոյութիւն։

6 Ժամածոյ շարժողութիւններ (Gebärden und Gesten)

Վերջապէս ծամածուռ շարժողութիւնները ևս չը պիտի արհամարհել, չը նայելով որ միմիկան և պարելու արուեստը ուսումնարանական մարմնամարզութեան չեն պատկանում։ Նրանք իրենց չափաւոր և ճիշտ գործադրութեամբ վայելչութեան բաւական շատ նպաստած կլինին. սակայն մանկավարժական մարմնամարզութիւնն բնաւօսական - հոգեբանական գործողութիւնների միջոցին, որոնք իւրաքանչիւր մարդուն ի բնէ յատուկ են, աւելի խուսափող դրութիւն է ստանում քան թէ նրանց գարգացնելուն և կատարելագործելուն նպաստում։

Վարպետը առաւելապէս այստեղ պիտի աշխատի խուսափել արուեստականութիւնից և միայն ի բնէ եղած ծամածուռ շարժողութիւնը չափաւոր կերպով գարգացնել։ Այստեղ պէտք է միշտ ի նկատի ունենալ որ ամեն շարժողութիւնների չափաւորութիւնն ու հանգստութիւնը ալնիւ մարդու պարզ նշանակ են։

Բ. ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ։

Մարմնի բոլոր մասերի ներդաշնակ գարգացմամբ, ուժի լիութիւնն չնորհելով, բոլոր շարժողութիւնների մէջ ճիշտ որոշում անելու սովորութեամբ և մի շնորհալի կեցուածք, վայելուչ քայլուածք և արժանաւոր ծամածուռ շարժողութիւններ ձեռք բերելով մարմնամարզութիւնն հնար է տալի այն ձևինն այն է մարդկային մարմնին, «որպէս թանձրացեալ մարդկային հոգու գործարանին և երևոյթին» ոչ թէ միայն հոգու վայելուչ կրող և ընդունակ գործիք լինելու, այլ և նորա (հոգու) բուռնդակութեան, այն է նորան ոգևորող գաղափարների, ամենամաքուր հայելի և պարզ տիպար դառնալու։ Ձևի կազմակերպութիւնն է միայն մի միջոց դէպի նպատակը։

1. Գեղարուեստական հնձանները։

Թէ ինչպէս մարմնամարզութիւնն գաղափարների հետ անմիջական յարաբերութեան մէջ է գտնում, այդ պարզ երևումէ առաջին մասից։ Ուշադրութեան, հնազանդութեան, արթնութեան, կարգի, արիութեան, խոհականութեան և վճռականութեան միջնորդական առաքինութիւններն, որոնք

մարզուղ աշակերտի մէջ պիտի խնամուին ու կազմուին, մի և նոյն ժամանակ գեղեցիկ և անթոզելի նախատիճաններ են բացարձակ գեղեցկի վերաբերմամբ, առանց նոցա բոլորովին անհնարին է աշակերտի մէջ գեղասիրական հետաքրքրութիւն (interessé) զարթնցնելու, ուր մնաց թէ մենք գեղասիրական արդասաւորութիւն ձեռք բերինք։

2 Գեղագրական գերակայութիւն (Ideale)։

Անմիջական տպաւորութիւններ, կամքի ուժգնութեան և նեբբին ազատութեան բարոյական գաղափարներն, որոնք մարզական տեղի վերայ պատասխանին մեն, մի և նոյն ժամանակ նաև գեղասիրական գերակայներն են, և նորանց զարգացումն սահիկի թէ բարոյական և թէ գեղասիրական կրթութեան համար բարեյաջող են, ինչպէս առհասարակ, եթէ մանագիտօրէն նայելու լինինք, բարոյական գիտութիւնն (Ethik) գեղասիրական գիտութեան մէջ (Esthetik) ամփոփուած է։ Բարեացակամութեան, հանրա-մտածմունքի և հայրենասիրութեան ազաքինութիւնների մէջ բարոյականութիւնն ոչ թէ միայն իւր հաստատութիւնն է գտնում, այլ և նոքա են նաև մի ճշմարիտ գեղեցիկ հոգու արտայայտութիւններ. այսպէս այն ամենը, ինչ որ մարմնամարզութիւնն բարոյականութիւնն զարգացնելու համար անում է, մի և նոյն ժամանակ յօգուտ գեղասիրական կրթութեան է կատարում, այդ երկուսը միմեանց հետ այնպէս սերտ յարաբերութեան մէջ են, որ Շիլլերն ասում է, «բարի գործիր, դու կը մօտեցնես մարդկութեան աստուածային բոյսի սերմերն»։

3. Գեղագրական հետաքրքրութիւն։

Մնում է միայն որ գեղասիրական զգացմունքը կրթելուն և խնամելուն առանձին հոգացողութիւն նուիրել. իւրաքանչիւր վարժութեան մէջ ուսուցիչը պիտի աշխատէ տղին հետացնել և միայն օրինակներով գեղեցիկը ցոյց տալ, եթէ որ աշակերտներ հանապատ այդ օրինակներն իրենց աչքի առաջ անմիջական պիտողութեան ներքոյ ունին, այն ժամանակ նոքա գեղեցկի բնութեան համաձայն դորանից հաճութիւն կստանան և կաշխատեն իրենց մէջ ըստ այնմ օրինակել և կազմակերպել, որովհետև գեղեցկի հաճութեան մէջ կայ մի և նոյն ժամանակ ձգտումն նոյնը բարքով խօսքով ու վարքով արտայայտել։

4. Գեղագրական արքաստութիւն։

Եթէ մի անգամ աշակերտի մէջ գեղասիրական հետաքրքրութիւն զարթած է, այն ժամանակ մարմնամարզական ուսուցումն կրթութեան այդ կողմի համար ամենանշանաւոր ժամ շահած է, որովհետև հետաքրքրութիւնն կամեցողութեան արմատն է և զորանով ևս արարքները, և հենց այդ է պատճառ որ բազմակողմանի հետաքրքրութիւնն իրաւամբ բոլոր կրթութեան կենդրոնացման կէտ է համարուած։ Որ գեղասիրական հետաքրքրութիւն իսկապէս գոյութիւն ունի, այնտեղ պէտք հոգեբանական օրէնքին համա-

ձայն նորան գէպի գեղասիրական արդասաւորութիւն տանել, և մի աշակերտ, որի մէջ այդ արդէն զարթած է, կաշխատի իւր բոլոր արարքներն և շարժողութիւններն գեղեցկացնել, իւր ազնիւ բարոյական մտածմունքներն ամենաձիւ ձևերի մէջ արտայայտել։ Աւօրեայ կեանքի նոյն ինքն ամենաֆոքը իրի ազնուացում « Հասարակական իրականութեան ազատ գեղասիրական վարմունքի մէջ, մի գ՛ղեցիկ հոգու պարզ նշանակն է։

Եթէ մենք այն ամենը, ինչ որ մարմնամարզութիւնն յօգուտ գեղասիրական և բարոյական կրթութեան անում է, իմ ամփոփենք, կարող ենք կարճ այսպէս ասել որ դա մարմնամարզութիւնն, մի նշանաւոր լծակ է մի բարոյապէս գեղեցիկ քնաւորութեան կրթութեան համար, այնպիսի քնաւորութեան, որն բարոյական գերակշիռներ գեղեցիկ ձևի մէջ իրականացնում է և նորանց իրականացնելով իւր վսեմութիւնն էլ կերևայ, Թէև մենք չենք կարող իրաքանչիւր ցեղ անպայման գեղեցիկ դարձնել այնու ամենայնիւ պիտի ամեն կերպ ձգտենք որ ամեն աշակերտի մէջ առողջ հոգի առողջ մարմնի մէջ քնակուի։

Ս. Ցէր Դաբրիէլեանց.

Քաղուածք Գ. Հրմ. մանկավարժական ամսագրից։

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒ ԵՒ ՓՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

—

Պ. Փիլ. Վարդանեանի « Հոմերի Իլիականը »։

(Շարունակութիւն և վերջ)

Ն, Ը.

Ծ Բ. Նու գիրը գրաբառի մէջ բոլոր միւս բանաձայներից աւելի է հանդիպում։ Շատ բառեր վերջանում են նուով, չհաշուած պիմորոշ նուն, որով տալիս են մեր լեզուին ռնդային արտասանութիւն և ձայն, Թիւրեա հայկական քերի անտարազ մնծութիւնն էլ իրրև պատճառ կամ հետևանք է այդ բանին։

Աշխարհաբառը բարեյաջող կերպով կրճատել է նուերը, ուստի և արուեստաբար կամ գրաբառի հետևութեամբ նոր լեզուն նուերով ծանրաբեռնելը չեռագիմում է։

Կոմն, ժոմն, եղն, յոմն, ոոոոոմ, հերոոոմ*) ևլն. գարձել են ուսում հեր-

(*) Սակայն Ղարաբաղի քարբառում ասում են կաթնը, ձուկնը, մուկնը եւլն։

քում՝ կաթ, ձուկ, եղ, մուկ։ Բայց ամենուրեք նուն չէ անհետացել բոլորովին, փոփոխութեանց (հոլովմանց, բարդութեանց ևլն) մէջ յառաջ է գալիս նա շատ անգամ։ իսկ դիմորոշ նուն, բաղաձայնով վերջացած բառերում ընկել է, թողնելով իր ձայնաւորը՝ —ըթը, օր. մարդն (մարդըն)—մարդը։ Ըթը փոխանակելով ըն ձայնը ոչ միայն մեծ հեշտութիւն է տուել արտասանութեան, այլ և՝ թէ երրորդ դէպք և թէ ընդհանուր դէպք է դարձել մնատմն փոխարինելով սէ և դա յօդերը (օր. իմ տունը, քո տունը, նորա տունը)։ Երեւում է անխոհեր թէ հասարակ և թէ յատուկ անուանց վրայ։ Ցէրն մեր Յիսուս Քրիստոս—մեր Տէր Յիսուս Քրիստոսը։ Քաջն Հեկտոր—քաջ Հեկտորը ևլն։ Հեշտալուր է դարձնում լեզուն մանաւանդ պէս կէտերից առաջ (ձայնի հանգստեան ժամանակ) խուլ և ընդհային ը ձայնի փոխանակ դրուելով, նոյնպէս և երբ երկու բառի, որից առաջինի վերջին՝ և երկրորդի առաջին տառերը բաղաձայն են, ըթը իբրև ձայնաւոր հեշտացնում է արտասանութիւնը։ Մինչդեռ եթէ ձայնաւորով է բառերից մէկի վերջը կամ սկիզբը, աւելի անհրաժեշտ է նուն, որ կապում երկու բառը և մի աւելորդ վանկ անհետացնում։

Օրինակ. ըստ մեզ լատինն է ասել՝ այն մարդը գնաց, այն մարդն ասաց, քան թէ՝ այն մարդն գնաց, այն մարդը ասաց։

— «Մարդիկն գնացին։ Փառքն նուագելով։» 106

Լատինն եմ՝ համարում ասել՝ մարդիկը գնացին։ Փառքը նուագելով։»

«Եղբօր վճիռն (ը) փոխելու։» 19 «Երբ որ այն մարդն (ը) մեկնեցաւ։» «Չեմ կարանալ չարն (ը) խափանել» «Փաղաքն (ը) մեր ձեռքն (ը) կընկնի։ 32 «Թող քարոզնեին (ը) տանեն նրան այն տեղից։» ևլն։

Առանց երկար օրինակներ բերելու և առանց Պ. Վարդանեանի գրածը սխալ համարելու, նորա լուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում նուի և ըթի գործածութեանց վերայ։

Մի քանի տեղ Պ. Վարդանեան ասում է, «այն օր» փոխանակ ասելու այն օրը։

«Ձայներից ոչ ոք այն օր (օրը) այնքան մեծ փառք չգտաւ»։

«Ուր հէնց այն օր յետ գնար։» 21

«Նա վաղից ալարտի շուրջ (շուրջը)։» 200

«Այն օրից պատանին Պարին անո՛ն ստացաւ»։

Այս ձևով, ինչպէս դրել է թարգմանիչը, նշանակում է՝ Պարիս պատանին հռչակուեցաւ, մինչդեռ կամենում է ասել՝ այն օրից պատանին՝ Պարիս անո՛նը ստացաւ։

«Անմահ դիներին (դիերին) պատուարաժ մատուցանելով» 31։

Այստեղ էլ նուն աւելորդ է։

Ցուսամ արևմտեաններին հետևելու մտադրութիւն չունին, որոնք վսեմ ոճով գրած լինելու համար ասում են «Հայրիկի ըրաղմունք, մեր աշխարհ, ձեր ձեռնարկ» ևլն, կուլ տալով բոլոր ըթերը։

Վ. ՈՒ. Ի.

ԾԳ. Մեր նոր լեզուի մէջ (արեւելեան բարբառում) այս դրերը ուղղագրութեան քար դպրոցականներն են. նու և չի, րէ և ռա, եչ և է, ո և օ նոյնպէս մեծ դժուարութիւններ են պատճառում համրակներին և հատակատար համրակներին. սակայն բացատրար մի քանի լաւ գրողներ հաւատար են համաքոմ նախապէս շատ կամ սակաւ ուղղագրութեան տարբերի հետ ծանօթանալ և ապա թէ մնալով գրականութեան ասպարէզ, որի համար և ամենայն շնորհակալութեան արժանի են, ի խնամոյս և ի գրգիռ այդքանն էլ չանողներին. Հարկաւ խօսքս Պ. Վարդանեանի վրայ չէ. Սակայն Պ. Վարդանեանի պէս գրողների մէջ էլ տարաձայնութիւնը շարունակւում է, որով և այսօր նոյն բայը երեք ուղղագրութիւն ունի մեր մէջ և դպրոցներում էլ չէ որոշուած թէ ո՞ր ուղղագրութեանն է նախապատուութիւն տալու. «Ա՛յրու-ում է, այր-ում է, այրվում է. աստում է, աս-ում է, ասվում է. Բամբասու-ում ենք, բամբասո-ում ենք, բամբասվում ենք».

Մխիթարեան հեղինակներն համար շատերից ընդունելութիւն է գտել վերջին ձեւը, որով խոսում ենք վեր կանոնը. վ-ը էրու-ի միջից բուռ ուխտը. այս ընդհանուր կանոն է. Այլ-ի գրելով սակաւաթիւ ուղղագրական կանոններից մէկն էլ քանդում է և գուռն է բացում «բարեկենդանեան» ուղղագրութեան, որին մի օրինակ բերենք պատահարար բանալով Հ. Խրէն Վարդապետ Սահմանեանի «Մանկավարժանոցի» Գ. երեսը. Գտնում ենք հետեւեալ ուղղագրական մոզայիքային ձեւերը. «Եվրոպական, առանդվելն, հյուրերու-մ էմ, վարվո-ում, Թախովելով անպատանախանապուռնիամբ ևլն. Նոյն երեսի վրայ ամեն տեսակը, ինչպես մի խանդում՝ ինչ ապրանք որ ցանկանաք.

Երկու ու (էրու-ա՛ է) գրողները համաձայն են մնում հին ուղղագրութեան, հաւատարիմ մնալով այն կանոնին՝ որ ոչ մի իրաւունք չունի կատարեալ փոփոխութիւններ մտցնել. — և ա՛ գրողները, ինչպէս ես, խոյս տալով երկու ա՛-ի երկարութիւնից նորա սղած ձեւն ենք գործ գնում, առանց ուշադրութիւն դարձնելու այն անտեղի նկատողութեանը, որ իբր թէ բաղաձայնից յետոյ հին չէ գրւում. (Հոգ-ոյ, յայգ-ոջ, եկեղց-ոյ ևլն. այստեղ էլ ո՛ր ինի ի մնացորդն է *) Իսկ վե գրողները խոյս տալով հինից,

(*) Մեր լեզուի կանոնով ձայնաւոր տառերը փոփոխութեան է-ն՝ ի. ը. ծէա՛ ծիսի. ի-ն՝ ը-ի ը. գիծ՛ գ(ը)ծի. այս իսկ կանոնով հոգի հոգւոյ եւլն. պիտի լիներ հոգ(ը)ւոյ միայն ը տառը սղուելով. Բացի այն բազմաթիւ բառերից, որոնք ի վերջացած լինելով հոլովելիս սղուած ի-ի տեղ բաղաձայնից յետոյ ե են ընդունում. հազիւ երբեք կարելի կը լինի բաղաձայնից անմիջապէս յետոյ ե տառը գտնել. Ըստ իս՝ ոսկեայ բառերում, ուր ոչ սրդէն կոչ եւ համարեա երբեք բառի միտն է՝ պէտք է ա-ն անփոփոխ դնել. ը. խորհրդատու—խորհրդատուութիւն. որովհետեւ տատ՝ն՝ տու վանկի մասն է. իսկ երկրորդը՝ թիւն ածանցիչ մնանկի չծորդիչը. Որովհետեւ աշխարհաբառը իւր յատուկ կազմութիւնն ունի. եւ որովհետեւ օրինակներ էլ ա-

Նորան բաղաձայնի եռև չդնելու համար, մէջ են բերում ահագին վեր, որ ոչ բաղաձայնի եռև է դրւում և ոչ ձայնաւորի։ Ով վանկը և թարգ բառերը (կառավար, երիվար և.ն.) այնպիսի բացառութիւններ են, որ իրանք իրանց ոչ միայն արգարացնում այլ և բացատրում են, հատատաքլով աւելի ևս վեր ընդհանուր կանոնը։ Ցանկալի կլինէր որ պ. Վարդանեան, կամ վեր կողմնակիցներից մէկը, պարզաբաներ վեր գործածելու, թերևս մեզ անյայտ, ուրիշ պատճառները, որով հնարաւոր կլինէր այսպէս կամ այնպէս լուծել այդ անհամաձայնութեան կնճիռը, գոնէ դպրոցական կեանքում՝ գասագրքերում։ Ասենք թէ մեր գասագրքերի մեծ մասը վճռուած և լաւ գրողներից ընդունուած ձևերին էլ չեն հետևում, մնալով հաւատարիմ քաքէկնդանեան ուղղագրութեան։

ՉԸ և ՉԻ

Փ. Մեր կարծիքով երբ որ չը բացասականը չհշտում է, այն ժամանակ ըլթը, ինի ի է փոխուում, ձայնի երկարելու պատճառով, օրին. «Ախ, ի՞նչ կդառնայ մեր օրդնակը։ Այլ ևս գու նրա պաշտպանը չես լինիլ, նա էլ չի՛ լինիլ ծերութեանդ սփոփիչ։» 211։ Եթէ չհշտի տեղը փոխնակ, ինքն էլ կփոխուի։ օրին. Նրա ծերութեանդ սփոփիչ չը լինելը մեծ դժբաղդութիւն է։ Պ. Վարդանեան ամեն տեղ ուղիղ է գործածում այս բացատկան մանրիկը, բացի «չը պիտի» բառից։ «Չը պիտի»-ի շհշտը վերջին վանկի վրան է և ոչ թէ չը-մանրիկի վրայ, սակայն, ինչպէս երևում է պ. Վարդանեան շհշտում է չը մանրիկը և դրում է միշտ «չի պիտի» (փոխանակ չը պիտի), ուստի և անհարժ չի պիտի-ներով ամբողջ գիրքը լցուած է։ Օրին. «Ես էլ ծերունի հօրս չի պէտ տեսնում», չի պէտ ապրիմ նրա հիւրընկալ յարկի տակ։ 158։ «Տեսնում եմ, որ նպատակներիս չի պէտ հասնենք։» 115։ «Պատճառ որ այլ ևս չի պէտ կարանամ։ . . .» 20։ «Մի անգամ իմ կոչուած օրիորդը չի պէտ մեռնի հօր ձեռքից։» Զօրքը չի պէտ կարանայ դէպի Տրոյա չուր ընկնել։» 26։ Նիշխոն այսուհետև չի պէտ ճօճալի Տրոյացւոց դէմ։» 43։ Եւ այլ բազմաթիւ չի պիտիներ։

ԳՐԱԲԱՌԻ ՉԱՓԱԶԱՆՑ ՀԵՑՏԻՈՒԹԻՒՆ.

Փ։ «Դու էիր որ ինձ հիւրընկալեր (հիւր ընդունեիր)։ երբ Ոլիմպից վռնտուեցայ» 164։ Վռնտուեցայ և հիւրընկալեր։ «Դեռ շատ մարդիկ իմ

նենք որ բառերի մէջ եռև վ տառը գործածուած լինի, ղ. ռով, սովոր։ երիվար յուլով։ հավանի եռևն աշխարհաբառի կրաւորական ներկայում ուր երկու ռ միասին դալով հնչումը ծանրացնում են, առաջինը վ դրելը յայտնի չէ։ Ի դէպ՝ ամենը աշխարհաբառում կրաւորականի կատարեալը անհրաժեշտ են համարում ցայ=կտրուեցայ, ցար=ցաւ, ցանք=կտրուեցանք ցաք, ցան վերջաւորելու։ Ցնոր իմ՝ ինչի որ աշխարհաբառի մէջ կրաւորականացուցիչն է ընդհանուր նամբրանիամբ ու. ե. կամ վ. բայերից անմիջապես չեղոց դրուած, ղօ. գործածուէ, պէտքէ ներգործական վերջաւորութիւնը պահել ամբոց ժամանակներում (ինչպէս այնհվում է ներկայում)։ Եթէ ասում ենք գործուեցայ պէտքէ ասենք նաև գործվում՝ ոչ անհնարին է։ Խմբ.

սուրից (սրից) գետինն ապտակի կը նմանէին (խածէին)։ » « Մեր գանձերը կը ծալենին և մատաղերամ մանուկներին գետնով կը տան։ » 198։ Առանձին և Թալանել։

« Գուցէ վարդներից մին կամ միւսն (միւսը) թողած լինի երասանն և անզօր գտնուած՝ պապոյտ պատռ նշանի շուրջը։ »

« Ոչ ոք չէր կամենում նրա քնքշագոյնը լինել։ » Բօթատել, գուժկան, գուժարեր և թերևս բօթագուժ, բայց ոչ բօթագոյժ։

« Սրանք դարձեալ վռնտուեցան մինչև իրենց նաւերն (նաւերը), ուր և՝ պէտք պատռ այն օրուայ գուպարածը։ »

Ցեսնում էք որ նա դեմ չեմ գուպարած բառին, որ աշխարհաբարում դեռ անծանօթ է, բայց « տեղի տուաւ » « հիւրընկալար » « հաւան գտան » ևն. բոլորովին անտեղի են նոր լեզուի մէջ։ Այլ է եթէ հին լեզուի յատնի ձևերը, նախադասութիւնները՝ ինչպէս « Ողջ լեր », « Ցէրն մեր Յիսուս Քրիստոս » փոխանակ ասելու՝ ողջ եղիր, մեր Տէր Յիսուս Քրիստոսը, գործ ենք դնում անփոփոխ։

« Մինչեւ ատ հապճեպ պատրաստուեցաւ »։ 119

« Բոլոր թագաւորները նրա առաջին հաւան գտան։ » 117

« Ուրախութ գոռոզմով, պատրաստածների ողջ ու գոյժով (գուժով) օդը լցաւ և երկիրն արեամբ հեղեղուեցաւ։ » 100

« Ագամեմնոնի սիրտը լցաւ բարկութեամբ և ցաւով։ » 39։

« Ապաւաւը չէ փախչում մինչև անգամ ընկերներից, որոնք ոտկոյն նրան հանուպաղ յարձակ էին։ » 115։ Անհամակոնատիլ։

« Նա վազեց պարտզի շուրջ (շուրջը)։ Աքիլ որպարձակ պնդեց եաևիյ։ » 200։

Ուզում ասել՝ եաևից ընկաւ կամ հետապնդից և կամ դրաւոմ ընկաւ պնդել, որի թարգմանականն է, ըստ պ. Վարդանեանի՝ եաևէց պնդել, որ և դըժբաղդաբար շատ և շատ կրկնուում է տալով հոմերականին վոզըվիլի կերպարանք։

« Եաևէց պնդողները թոյլ չտուին »։ 126։

« Սակայն Դիոմեդ դարձեալ պնդաւ էր վիրաւոր Էնիասի եաևէց, որին որ հեղաստրել էր Ապոլոն » 77։

« Եաևէց պնդեց և հէնց որ հասաւ, ծակեց տէգով ամբրոսականն ղգեստը։ » 76։ և ևն։

Մեծ մասամբ մեկնում ենք պ. Վարդանեանի պատճառ ծայրայեղ գրաբառականութիւնը, երբ ուշի ուշով քննելուց յետոյ տեսնում ենք որ պարոն Թարգմանիչը դէպքից օգտուել է, ինչպէս վերևն էլ ասացինք մեր գրաբառ հոմերականներից, մանաւանդ Հ. Աբսէն Բագրատունու Իլիականից (1864 Վենետիկ), փոխ առնելով նորա բոլոր տերմինոլոգիան, գէնքերն, արշաւները, կռուի և ճակատի վերաբերեալ։ Այս ասելուց յետոյ

այլ ևս երկար չենք կանգնում այս և այն բառի, զէնքի անուան, կառքի մասի վրայ, յաջող կամ անյաջող թարգմանութիւնը քննելու, քանի որ մեր նպատակը չէ Բագրատունու աշխատանքը քննադատել։ Միւս կողմից՝ Իլիականը, իրրև գիւցազներգութիւն աւելի գրաբառ կվերցնէր, քան թէ մի ուրիշ գրուածք, օրին. Ռոբինզոն կամ Մահմետի կեանքը վրայն։

ՄԷՆԱԿՍ։

Ծ.Զ. (Փոխանակ ասելու՝ մինակ, մենակ, միայնակ)

« Թոյլ տուէք, որ ես Ջնաւկս բանակ գնամ։ » 208։

« Ես որ յանդգնել էի Ջնաւկս նրա դէմ կանգնիլ։ » 199։

« Ես Ջնաւկս չեմ՝ կարող այսքան տրոյեանց միջից անցնիլ։ » 187

Երևի որ և է գաւառական բարբառից է առել պ. Վարդանեան այս ձևը, որն աւելորդ է, քանի որ ընդհանրացած (գործածական) միւս ձևերն ունինք։

ՈՒՐԻՉ ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ։

Ծ.Է. « Սակայն ասա, ի՞նչ մոքով ես շնորհ բերել մեր յարկին։ » 165։

Լաւ է ասել՝ մեր յարկը, Շնորհ բերել մեր տունը և ոչ մեր տանը։

« Արագ հասաւ նա աղբերաշատ Իդա սարին։ » 99։

Հասաւ ասէը, հասաւ քաղաք, հասաւ Թիֆլիս, բայց հասաւ ծառի ճիւղին, նպատակին, մտադրութեանը, փափագին, ցանկութեանը։ Հասաւ իւր տանը իմ կարծիքով, նշանակում՝ հասաւ իւր տան դռ, իսկ հասաւ իւր տունը—տան մէջ։

« Մտածելով, թէ աստուածներն ինձ ոչ զաւակ չէին շնորհել, և դու էիր իմ որդին » 114։

Լաւագոյն է ասել ։ ոչ մի զաւակ, կամ՝—մի զաւակ անգամ՝ և կամ՝ ինձ զաւակ չէին շնորհել։

« Անգամ՝ նոյն իսկ աստուածներն » 114։

Նոյն իսկ աստուածներն անգամ։

« Փայտակոյտը կրակ տուէին։ բայց թարմ՝ փայտերը չէին ուզում՝ պայքա-ել։ » 217։

Ա յստեղ պէտք ասել՝ պրուիլ, վառիլ կամ բռնկիլ։ Ծուխ որուելու ուղիղ գործածութիւնը տես հետևեալ նախադասութեան մէջ։

« Դեռի աստուածն (ը)՝ այս հրահոսան հրդեհից տագնապած և տուչորուած, գթութիւն հայցել սկսաւ » ։ 193։

« Ագամեմնոն քո-նահաջել ինքն իրեն՝ որտի վիշտը ճնշելու » 21

« Ցիշիր, ինչպէս դեռ մանուկ գալով փարվում էի (փարում էի) ծունկերիդ ։ » 25։

« Սակայն «ոչինչ պէս» (ուրիշ տեսակ, այլապէս) էր մտածում Ագամեմնոն թագաւորը » 37.

« Պառակտուել էք իրարուց (իրարից)» 43.

« Այսպէս խօսեց սրքայապետն (ը), և յոյներն «ձի՛ւ ասաց» պատերազմական ազդակներ յարուցին։ »

Ուզում է ասել ոգևորուած, մինչդեռ ոչի առած աւելի նշանակում՝ շունչ քաշած, հանգչած։

« Ա՜յ դու կնամոլիդ Դըժ-Պարիս » ։

Ըստ իս Զիք-Պարիս։ Ինչպէս ասում ենք՝ չաստուած, չեպիսկոպոս. չիք մարդ ևէն։ Թէև Հայր Արսէնն ունի և Դըժ-Պարիս։

« Ա՛յս առելով նա կրկին նստաւ կառքի ձէջ և սրտատրոփ վերադարձաւ դէպի Տրոյա։ » 62.

Նստաւ կառք և վերադարձաւ Տրոյա։

« Դու չէիր պարծեցողը, թէ բազկով էլ, կորովով էլ Մենելաւից էապէս էիր (բարձր ես), գնալարդով էլ նրանից գօրեղ։ »

« Եւ եթէ վերջապէս հայրենիք վերադառնանք, թող նա իրեն կին ուզէ իմ ազգիկան, և ես նրան մի այնպիսի օժիտ կը տամ, որի նմանն ոչ մի արքայ դեռ չէ ուղած իւր փեսային։ » 105.

Նրան մի այնպիսի օժիտ տամ և ոչ կը տամ։

« Ո՛վ գիտէ, թշնամիները մեզ որ յաղթեն, գուցէ մի գոռոզ յոյն քեզ գերի կը պահէ, և դու, իբրև սարուկ, ոստայն կմանէս նրա կնոջ համար և ջուր կբերէս հեռաւոր աղբիւրներից։ Եւ մարդիկ՝ քեզ արտասուաթոյր տեսնելիս՝ կասեն. քա՛, սա Հեկտորի՝ Տրոյացոց քաջ դիւցազնի ամուսինն էր ևէն։ » 183.

Աւելի լաւ եմ համարում այս պարբերութեան մէջ բայերի հետևեալ ձևը, գործ դնել.

« Ո՛վ գիտէ, թշնամիները մեզ որ յաղթեն, գուցէ մի գոռոզ յոյն քեզ գերի տանի, և դու, իբրև սարուկ՝ ոստայն մանես նրա կնոջ համար և ջուր բերես հեռաւոր աղբիւրներից։ Եւ մարդիկ՝ քեզ արտասուաթոյր տեսնելիս՝ ասեն. քա՛, սա Հեկտորի՝ Տրոյացոց քաջ դիւցազնի ամուսինն էր ևէն։ »

Շատ համարելով այսչափ օրինակը պարտք ենք համարում յիշեցնել, որ մեր նկատողութիւնների մեծ մասը ճշդելի բնդիր է։ Ցայտնի է, և այն, որ իւրաքանչիւրն իւր ճաշակն ունի ամեն բանում, ինչպէս և նոր, անմշակ և չկազմակերպուած լեզուի վերաբերութեամբ էլ։ Համոզուած ենք որ մեր նկատողութիւնները օգտակար կարող են լինել կերպրնայնելով թէ գրողների և թէ ընթերցողների ուշադրութիւնը լեզուի այս կամ այն մոռթ կէտի կամ աւելի մնացած տարաձայնութիւնների վրայ։ Ինչ վերաբերում

Պ. Վարդանեանին, նա մեր կարծիքով, ոչ միայն արդի գրականութեան լաւագոյն մշակներից մէկն է, այլ և թարգմանիչներից թերևս առաջինը։

Մեր հասարակութեան մէջ, ուր արտաքին կրթութիւնը և նկամուտ տարազները միայն մակերևոյթն են սքողում, իսկ հինը, սեփականը, ասիականը տակաւին մնացել է խորքում, պատրաստ ամեն րոպէ դուրս ժայթքելու, մեր այդ տեսակ հասարակութեան մէջ, ասում եմ, բաւական է մէկի գործը ենթարկել քննադատութեան և ահա քննադատուածը ընդ-Նո-ի մեծամասնութեան աչքից վարկը կորցնում։ Քաւ լիցի մեզ մեծամտել և կարծել թէ մեր այս տրկտողը Պ. Վարդանեանի պէս ընդունակ աշխատաւորի վարկին վնասէ, սակայն sapienti sat։

Հատորի գրուածքը այն պատճառով միայն չէ քննադատում, որովհետև քննութեան ենթարկելու արժանի ոչինչ չկայ նոցա մէջ։ Քննադատութիւնը, լեզուի խնդրում, եթէ զբաղուի ամեն մի չնչին գործով, ստիպուած է լինելու սուտն ու սխալը կրկնել հանապազ, որով թերևս աւելի վնասակար էլ լինի։

Աւելացնենք և այս, որ այսպիսի քննադատութեանց մէջ, մենք օրինակը աւելի լաւ ենք համարում քան թէ պատճառաբանութիւնը։ Մանաւանդ որ շատ անգամ պատճառաբանութիւնը դժուար և նոյն իսկ անկարելի է գոնէ արդի գիտութեան առաջ։

Ինչի՞ այս ինչ բայը այս հոլովով խնդիր է պահանջում և ոչ ուրիշ հոլովով։ Ինչի՞ ուսերէն ասում են «երկու տան, չորս տան և հինգ տների», ինչի՞ հայն ասում՝ աղջկայ հետ պսակուել, իսկ ռուսը՝ աղջկայ վրայ պսակուել և այլն։

Այս տեսակ հարցերով մտնում ենք մենք արդէն լեզուաբանական բնազանցութեան մէջ, որ և ուղղակի ոչ մի կապ չէ կարող ունենալ կենդանի լեզուի աճելութեան և զարգացման ընթացքի հետ։

Մ իսաբան։

ՎԱՐՉԱԿԱՆՔ։

(ՍԻՆՕԴԻ ԴԵԿՏ. ՕՐԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)։

Կ. Դեկտ. Սինօդը վանահայրերի ինքնահաճոյ և վնասակար գործողութիւնների առաջն առնելու համար որոշեց շրջաբերական հրամանով պատուիրել որ վանահայրերը Ա. առանց Սինօդի թոյլտուութեան Ս. մասունքները չընդունեն վիճակներում և արդիւնքը չըգործադրեն. ըստ հաճոյից։

Բ. բոլոր շարժական կայքերը, օրինակ, ձեռագիր և տպագիր սուրբ գրքերը, զգեստները, զարդերը և անօթները պահպանեն խնամքով, իսկ առանին պարագաները, կարասիքը, գործիքները, անասունները ևլն պահպանեն խնամքով և առանց Սինօդի թոյլտուութեան չըմաճառեն։

Պ. Վանքային շէն գիւղերում որտեղ հաստատուած են ուսուցչի գրամօտներ, վանահայրերը պարտաւոր են անթերի ստանալ բահրայ և սահմանուած հարկը ամէն տեսակ հողերի համար՝ որոնք գտնւում են ժողովրդի ձեռքին, իսկ այն դիւղերը, ուր չեն կազմուած ուսուցչի գրամօտներ, բահրան և հարկը կապալով չը տալ, այլ աշխատել ստանալ անձամբ կամ հաւատարիմ մարդոց ձեռքով։

Ր. Վանքերի տիրապետութեան տակ եղած աղչայ հողերը և այլ տեսակ գետինները վանահայրերը պարտաւոր են մշակել իրանց անմիջական հսկողութեամբ, և արդիւնաւորել տեղական յարմարութեան համեմատ, բայց անձեռնհաս գտնուելու դէպքում՝ վանահայրերը կարող են մերձաւոր հոգևոր Առենաւորդիներում օրինաւոր աշրդախօսութեամբ կապալով տալ և աշրդախօսութեան թերթը աւագարկել Սինօդին հաստատութեան համար։

Ս. Այս կարգով էլ կարելի է կապալով տալ վանքային տները, կրպակները, ջրաղացները, այգիքը, արօտատեղիները, խոտատեղիները, պգետեղիները, տնատեղիները, ամարանոցները, վարելահողերը և այլն։

Զ. Անտառները երբէք կապալով չը տալ, այլ պահել վանահայրերի խնամարկութեան տակ. միայն անտառներից վանահայրերը կարող են փայտ կտրել վանքում գործադրելու համար ածուխ շինելու, իսկ վաճառման համար պէտք Սինօդից թոյլտուութիւն խնդրեն։

Է. Խոտիւ արգելուած է վանահարց վանական սեպհական հողերը, արօտատեղիները, այգետեղիները, տնատեղիները, և այլ կալուածները օտարացնել տասանորդով, լուսագնով կամ ո՛րև է պայմանով ուրիշին տալով ի շահեցողութիւն։

Ը. Վանահայրերը պարտաւոր են իւրաքանչիւր տարի վերջին Սինօդին ներկայացնել պակասած կամ աւելացած կայքի և կալուածների ցուցակը հանգամանօրէն յայտնելով կալուածների դրութիւնը և ճիշտ հաշիւ տալ իրանց գործունէութեան համար։ Այս մասին տեղեկութիւն տալ բոլոր Կոնսիստորեաներին, որ Հոգ. կառավարութիւնների միջոցաւ հսկեն վանահայրերի վերայ որ իրանց պարտաւորութիւնները անթերի կատարեն։

---

7. Դեկ. Սինօդը Վեհափառ Հայրապետի տուրոյս № 604 կոնդակին համեմատ որոշեց Յուսիկ վարդապետ Մովսիսեանին արձակել Արարատի իսմբագրութեան պաշտօնից և նորա տեղը կարգել Սինօդի անդամ և Տպար. ժողովի նախագահ Գեր. Արիստակէս եպիսկոպոսին, իսկ դպիր Գալուստ Տէր Մկրտչեանին՝ սրբագրիչ նոյն ամսագրի։

---

7. Դեկ. Սինօդը Վեհափառ Հայրապետի տուրոյս № 598 կոնդակին համեմատ որոշեց Արարատը կրօնական և ուսումնական նիւթերով և այլ հետաքրքրելի ծանօթութիւններով ճոխացնելու համար «Մեղու Հայաստանի» խմբագիր Պ. Պետրոս Սիմոնեանցին կարգել մշանջենաւոր գործակից խմբագրութեան տարեկան 600 րուբլի ռոճկով. և որովհետև ստէպ ստէպ հարկ է

քանալ Պ. Սիմեոնեանցի առաջ մատենադարանի գռները՝ կարևոր նիւթեր և ծանօթութիւններ քաղելով հրատարակելու համար, ի դիւրութիւն՝ որոշից կարգել Մատենադարանապետ Տէր. Ներսէս եպիսկոպոսին օգնական՝ Մայր Աթոռոյս միաբան Սահակ Աբեղայ Ամատունուն իսկ դպիր Ա-զէքսանդը Բինգլեանին՝ գրագիր։

—

7. Դեկ. Սինօդը որոշեց Ս.Ստեփաննոս Կարմիր վանքի վանահայր Ճակովբ վարդապետ Տէր Աբրահամեանցին կարգել Ս. Ստեփաննոս Նախավկայի վանահայր, իսկ Երնջակի Ս. Կարապետի միաբան Ճակովբ վարդապետ Նորատունկեանին՝ Ս. Ստեփաննոսի Կարմիր վանքին վանահայր։

—

11. Դեկ. Սինօդը որոշեց շրջաբերական հրամանով պատուիրել բոլոր Կոնսիստորեաններին ու հոգևոր կառավարութիւններին, որ Ս. Միւռոն ստանալու համար յայտարարութեամբ դիմեն ուղղակի Վեհափառ Հայրապետին իբրև օրհնողի Ս. Միւռոնի։

—

14. Դեկ. Սինօդը ստանալով Բեսսարաբիոյ թեմի եկեղեցիներից ի նպաստ վերաշինութեան մայր տաճարի մի հազար րուբլի որոշեց պատուիրել գանձապահին մուտք գրել աթոռային արդեանց տումարում։

—

15. Դեկ. Սինօդը Վեհափառ Հայրապետի տարւոյս № 613 կոնդակին համեմատ որոշեց Կարուց վիճակի Տայլարսւ հողերը տալ եռամեայ ժամանակով ի շահեցողութիւն Կարսի երկսեռ դպրոցներին, և յետ այնորիկ դարձնել նոյն արդիւնքը յօգուտ ճեմարանի մայր Աթոռոյս։

Մայր Էջմոծոյս Մխաբան

ԹԸԴԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. ԳԷՆԻՆԷԼԵԱՆ

Ամսոյս 25-ին պիշերը երկարատև հիւանդութենէ յետոյ

ՀԱՆԳՉԵԱՒ Ի ՏԻՐ։

Հանգուցեալը յիսուն տարեկանէ աւելի էր և վարել է զանազան պաշտօններ ըստ կարգադրութեան Հոգևոր իշխանութեան։

Հանգուցեալ մարմինը վայելուչ յուղարկաւորութեամբ ամսոյս 27-ին ամփոփուեց Մայր Էջմոծոյս գերեզմանոցում։

Լուսաւորեսցէ Տէր զհոգի Հանգուցելոյն և ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ. ամէն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԸՐՔԸՔՑ ԱՍՏՍԳԳԲՔ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՑԻՆ։

Վ եհափառ Հայրապետի բարի ցանկութեան և կամքի համաձայն՝ առաջիկայ 1888 թուականից սկսած Ս. Էջմիածնի մայր տաճարում պիտի կատարուի Ս. Հոգեգալստեան տօնի երկրորդ օրը։ Ս. Հոգեգալստեան տօնի երկրորդ օրը

և բարոյական կերակուր տալ իւր ընթերցողաց, մանաւանդ եկեղեցականաց, որոց մեծամանութիւնն կարօտ է թէ գիտութեան և թէ ղեկավարութեան իւր պարտքը դէպի Սուրբ Եկեղեցին և դէպի իւր հօտը սրբութեամբ կատարել կարողանալու համար:

Արարատի խմբագրութիւնը, Տարին Օծութեան հրամանի համեմատ, պարտաւորվում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրն այդ կըցանկայ: Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումն կպատկանի մանաւանդ, որ հրամանաւ Տարին Օծութեան կըկազմուի:

Արարատը կհրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5 ր. իսկ Ընդկաստանում և Եգիպտոսում 6 րուբլի: Հայաբնակ գաւառներում և քաղաքներում ստորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին: Հասցէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Յանձնին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ.

Ի ՇՐՋԱՆԻ ԸՐԸՐՑԻ ԸՄՄԱԳՐՈՑ

ԿՐՕՆԱԿԱՆ.

Ծնունդ Յիսուսի ի Բեթղէհէմ Ց. Վ. Մ. 3.
Քարոզ մահուան վերայ (Թարգ.) Գ. Ե. Ա. 5, 49.
Ամէն Հայաստանեայց (շարունակութիւն 1886 թուէ) Մ. Ե. Օ. 13, 59, 104, 159, 205.
Մարդոց արած գատաղութիւնն ու գատաստանը (Թարգ.) Գ. Ե. Ա. 97.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց Կ. Գ. Տէր Յակովբեանց 145.
Ապերախտութիւն (Թարգ.) Գ. Ե. Ա. 147.
Անմահութիւն (Թարգ.) Գ. Ե. Ա. 194.
Աշխարհս յաւիտենական կեանքի հայելին է (Թարգ.) Գ. Ե. Ա. 241.
Ճառ Հոգեգալստեան (Թարգ.) Կ. Տէր Յակովբեան 251.
Յաւիտենական կեանքի վերայ մտածութիւն (Թարգ.) Գ. Ե. Ա. 289.
Մաքուր Հոգին Աստուած կը տեսնի (Թարգ.) Գ. Ե. Ա. 333.
Ճառ վերափոխման Ս. Աստուածածնի (Թարգ.) Կ. Տ. Ց. 343.
Երկրաւոր բաղդաւորութեան բարիք (Թարգ.) Գ. Ե. Ա. 384.
Ճառ վերացման սրբոյ Խաչին (Թարգ.) Կ. Տէր Յակովբեան 391.
Մարգս և իւր գործն (Թարգ.) Գ. Ե. Ա. 429.
Ճառ ի տօնի աւետման (Թարգ.) Կ. Տ. Ց. 438.
Աշխարհ. (Թարգ.) Գ. Ե. Ա. 469.
Բաղդաւոր լինելու արուեստը (Թարգ.) Գ. Ե. Ա. 514.
Տարուայ վերջը (Թարգ.) Գ. Ե. Ա. 523.

ՊԱՏՄԱԿԱՆ.

Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ (շարունակութիւն 1886 թուէ) Մոսէսի Խոր. Երզնկեանց 27, 68, 168, 213, 256, 300, 349.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

Պատրաստուող սերնդի առաղջապահութիւնը (շարունակութիւն 1886 թուէ թարգ.) Մ. Տ. Սարգսեանց 38, 81, 124, 174.
Աւետրիական եպիսկոպոսների Հովուական թուղթը (Թարգ.) Ս. Տ. Գ. 77.
Ստութիւնը մեծ մեղք է, (Թարգ.) 88.
Հազար ոսկի (Թարգ.) 134.
Աստուա՛ծ են միայն (բանաստ.) Ն. Տ. Աւետիքեանց, 135.
Գրգուսի (Թարգ.) Սամուէլ Գիւղպատեանց 227.
Ուսումնարանը և ընտանիքը (Թարգ.) Ս. Տ. Գ. 274, 316, 364.
Գիւղացու բողոք (բանաստ.) Ն. Տ. Աւետիքեանց 322.

Նամակ Հին Պայազետից Ն. Գ. 371։
Ռուսաց Հոգևոր դպրոցները (Թարգ.) Սարգիս ՔՀ. Բէգնազարեան 397։
Արաքսի Հովիտը և Հայեր (Թարգ.) Մխաբան. 405։
Մարմնամարզութիւն և նորա համառօտ պատմութիւն Ս. Ճ. Գաբրիէլեան 443, 480, 532։
Աշխարհաբառ լեզուի քննադատութիւն Մխաբան 450, 493, 537։
Նոյեմբեր ամիս (բանաստ.) Ն. Տ. Աւետիքեանց 498։

Ա Ջ Գ Ա Ճ Ի Ն.

Թ. Ա. Կ. Պօլսոյ ձայն 45։
Թ. Բ. Քարոզիչք Ս. Էջմիածնի և Վաղարշապատու 89.—Հաշուեցուցակ Հոգ. երկսեռ դպրոցաց Աստրախանի 89։
Թ. Դ. Զատիկ.—Ճառ երկսեռ աշակերտաց Վաղարշապատու ուսումնարանաց 191։
Թ. Ե. Նուիրատուութիւնք Աստրախանի Հայոց.—Հայուհեաց բարեգործական ընկերութեան Տփխիսոյ.—Նուիրատուութիւն Գեր. Սերովբէ եպիսկոպոսի.—Նուիրատուութիւն պ. Կոստանդնի Ալիխանեան 231։
Թ. Զ. Կաթուղիկէ Մայր եկեղեցւոյ տօնը.—Հինգ կուսակրօն քահանայից ձեռնադրութիւնը.—Ճամախեցւոց ընծայաբերութիւնն առ Գեր. Թադէոս Արքեպիսկոպոս Զիւնական.—Նոր Նախիջևանցի Միքայէլ Ս. Ճորչոփեանցի Նուիրատուութիւնն.—Հավլաբարի Խօջավանքի հանգստարանի հաշիւը 281։
Թ. Է. Հաշիւ եղից և մտից եկեղեցական ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Նոր Բայազիդու 324։
Թ. Ը. Ազգ գործադիր.—Մնայուն ժողովոյ կտակին Ծովսէփայ Իզմիրեանց 376։
Թ. Թ. Վերադարձ Վ.ԵՀ. Հայրապետի.—ԾԳ. տարեդարձ բացման ճեմարանի.—Հանդէս մրցանակաց բաշխման Իզմիրեանց կտակին 413։
Թ. Ժ. Տեղեկագիր ճեմարանի Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի 1886—87 ամի 459։
Թ. ԺԱ. Հանդէս Ռ. Տարեդարձի Օծման Վ.ԵՀ. Հայրապետի ազգիս.—Նուէր Կ. Պօլսից և Մայր Տաճարի վերանորոգութիւն.—Թուղթ Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ.—Կոնդակ Վ.ԵՀ. կաթուղիկոսի առ Ս. Պատրիարք Կ. Պօլսոյ.—Հաշիւ Ճամախւոյ և Թելաւի ուսումնարանաց 500։
ԱՃԼ ԵՒ ԱՃԼՔ. 46, 93, 137, 192, 238, 326, 425։
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. Դէպն Վ.ԵՀ. Հայրապետի 47, 93 140, 288։
Օբէբ-Ղէհան սքեոփէ 94, 141, 239, 329, 376, 425, 544։
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. 1, 96, 142, 332, 428։
ՄԱՀԱԿՈՒՃԻ. 143, 194, 5։

ՅՈՒՅՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Ի ԹՎԷ ՇՐՋԱՆԻ (1887) ԱՐԱՐԱՑ ԱՄՍԱԳՐՈՑ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

ԱՍՏՐԱԽԱՆ 20

Գեր. Գէորգ Եպս. Սուրենեանց
Արժ. Գրիգոր վարդապետ. Յովսեփեան
Գործ. Թադէոս ՔՀ. Կոմժենեանց
Աստուածատուր Ա. ՔՀ. Լազարեանց
Յովսէփ Ա. ՔՀ. Բաղինթեան
Մելքիսեդէկ ՔՀ. Քալանթարեան
Մինաս ՔՀ. Մխիթարեան
Յովհան ՔՀ. Խալաճեան
Դաւիթ ՔՀ. Գաբաշեան
Աբրահամ ՔՀ. Պապովեան
Գրիգոր ՔՀ. Կոստեան
Յովսէփ ՔՀ. Բէկնազարեան
Գաբրիէլ ՔՀ. Բաղինեանց
Սարգիս ՔՀ. Բէկնազարեան
Պ. Մկրտում Դանիէլեան Սերգէյեանց
Ազաբէկեան դպրոցին (Նուիրէ Պ. Խաչատուր Լազարեանց)
Պ. Յարութիւն Ս. Իվանեանց
Պ. Գազարոս Մկրտչեան
Պ. Համբարձում Գուլումեանց
Պ. Գէորգ Սպիտակեան
Հայոց դպրոցին (Նուիրէ Մոսկովաբնակ Սարգիս Զանուսեան)

ԳԷՈՐԳԻՍԿԻ 1

Սարգիս ՔՀ. Տ. Պօղոսեան

ԱՐՄԱԽԻՐ 5

Գործ. Վարդան ՔՀ. Դաւիթեան
Գալուստ Ա. ՔՀ. Գաւթենց
Գասպար ՔՀ. Խալաճեանց
Դպ. Նիկողայոս Հալաճեան
Դպ. Սիմէօն Կոմժենեանց

ԵԴԵՍԻԱ 5.

Գործ. Գէորգ ՔՀ. Յարութիւնեան
Միքայէլ ՔՀ. Սաֆարեան
Կարապետ ՔՀ. Վլասեան
Ղեկան դպրոց
Պ. Կարապետ Աւագեանց

ԹԷՄԻՐԽԱՆ ՇՈՒՐԱ 1.

Գէորգ ՔՀ. Փէքմէզեան

ՂԶԼԱՐ 11.

Գործ. Խորէն ՔՀ. Ղարագաշեանց
Մկրտիչ ՔՀ. Մկրտումեանց
Սահակ ՔՀ. Պապովեանց
Բարդուղիմէոս ՔՀ. Կիպարեանց
Խաչատուր ՔՀ. Աստուածատուրեանց
Թովմաս ՔՀ. Աբգարեանց
Ալէքսանտս ՔՀ. Աստուածատուրեանց
Գարեգին ՔՀ. Աւագեանց
Պ. Մարգար Դ. Մամուճանենց (Նուիրէ դպրոցին Ղզլարաբ).
Պ. Աւետիք Թումանեանց
Բաղդասար ՔՀ. Լալազարեանց

ՄՈԶԴՈՒ 10

Գործ. Թադէոս Ա. ՔՀ. Խաթրովեանց
Գաբրիէլ Ա. ՔՀ. Տուրփանեան
Աբրահամ ՔՀ. Բէժանեան
Զաքարիա ՔՀ. Սէրէբրեանց
Յարութիւն ՔՀ. Աբրահամեանց
Սահակ ՔՀ. Հնդիկեանց
Խորէն ՔՀ. Շահնեանց
Պ. Յարութիւն Գրիգորեան
Պ. Յարութիւն Մ. Շարապանեանց
Տիկին Նազէք Գանջումեց (Նուիրէ օրիորդաց դպրոցին Մոզդոկայ).

ՍՏԱԽՊԱՊՈՂ 5.

Գործ. Դէորգ ՔՀ. Զաքարեան
Բարդուղիմէոս ՔՀ Բէկնազարեանց
